

Բրիտանական «Սանտեյ Միրրոր» օրաթերթը հաղորդեց պայմանագրի մասին, որ սակայն անմիջապես հերքուեց ամերիկյան իշխանությունների կողմից: Ըստ թերթին՝ Սատամ Հիւսէյն բանակցութեան մէջ է ամերիկացիներուն հետ եւ կ'առաջարկէ յայտնել պանգոյաձային պէնքերու թաքստոցները, ինչպէս նաեւ տասնեակ միլիոնաւոր տոյարներու հաշիւները օտար դրամատուներու մէջ: Փոխարէնը, իրաքցի բռնատէրը կ'ուզէ ապահով երթալ Պեյրոտիսիա եւ քաղաքական ապաստան գտնել:

Օրաթերթին համաձայն՝ նախագահ Ճորձ Գուշ տեղեակ է այս բանակցութիւններէն, զորս կը կատարէ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Քոնտրիկա Ռայս:

ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ ԿԸ ՅԵՐՔԷ

«Դրամի լուացում»ի դէմ պայքարող Կեդրոնական Դրամատան յանձնախումբին կողմէ պահանջուող հաշուեցոյցերը՝ պաղեստինեան կապակերպութիւններու ղեկավարներուն պահ դրուած գումարներուն մասին, երէկ արծարծուեցան պաշտօնական շրջանակներու կողմէ:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ Կեդրոնական Դրամատունէն պահանջեց բացատրութիւն մը այս գծով: Կ. Դրամատունը հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտեց, թէ այս իմաստով լրատումի շրջաններուն փոխանցած տեղեկութիւնները սխալ են: Հաղորդագրութեան մէջ նշուեցաւ նաեւ, որ վերոնշեալ յանձնախումբը ոչ մէկ որոշում տուած է դրամատուներու «գաղտնապահութեան դրութեան» վերջ տալու իմաստով եւ ոչ մէկ քայլ առած է ստեղծելու կապակերպութիւններու վերաբերող գումարներ:

Լիբանանի մէջ Համա շարժումի ղեկավար Ռուսմա Համտան վարմանը յայտնեց Լիբանանի մէջ նման որոշումի մը համար, Լիբանանը նկատելով դաշնակից երկիր, Դիմադրութեան երկիր: Համտան նախագահ Լահուտէն պահանջեց միջամտել՝ լուծելու համար հարցը:

ՓԱՐԻՉ ՄՏԱԴԻՐ ՉԷ ԿԵԹՈՅԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՔԻ ԳԾՈՎ ՄԱԿԻ ՆՈՐ ԲԱՆԱՁԵՒ ՄԸ

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԺԱՔ ՇԻՐԱՔ

Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք յայտարարեց, որ Փարիզ մտադիր չէ վերջի ենթարկելու իրաքի գծով ՄԱԿի նոր բանաձեւ մը, որուն ի նպաստ պիտի քուէարկէ, եթէ նշուած ըլլայ, թէ իշխանութիւնը շուտով իրաքցիներուն պիտի փոխանցուի:

Շիրաք, որ Նիւ Եորք կը գտնուի մասնակցելու համար Ընդհանուր ժողովի նիստին, շեշտեց, որ Ֆրանսա չ'ուզէր դէմ դնել բանաձեւին: Ան աւելցուց սակայն, որ բանաձեւը պէտք է բանալի դերակատարութիւն տայ



ՄԱԿի իրաքի վերականգնման աշխատանքին մէջ: Շիրաք ըսաւ նաեւ, որ բանաձեւին պարզապէս պիտի կանգնի, եթէ անիկա պարունակէ յստակ

ժամանակացոյց մը իշխանութեան փոխանցման համար: Եթէ այս պայմանները չամբողջացուին, Ֆրանսա

Շարք՝ էջ 2

ԱՁՐՊԵՅՃԱՆ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԻՍՐԱՅԵԼԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԲԵՐՔՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԾԻՐԷՆ ՆԵՐՍ

ԷՁ 10

ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ՆԵՐԿԱՅ ՀԱՄԵՄԱՏԱԲԱՐ ԽԱՂԱՂ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԿԸ ՆԿԱՏԷ «ԱՐԴԻԻՆՔ»

ԱՐԱՑԱԹԻ ՌԻՂ ՂՈՒԱԾ ՄՊԱՌՆԱԼԻՔԻՆ...

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն յայտնեց, որ համեմատաբար խաղաղ մթնոլորտը, որ կը տիրէ ներկայիս, արդիւնք է պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթը «հեռացնելու» սպառնալիքին, զոր յայտարարած էր Իսրայէլի կառավարութիւնը:



Շարոն դիտել տուաւ, որ ըստ երեւոյթին՝ Արաֆաթ մտահոգ է իսրայէլեան սպառնալիքով եւ սկսած է լրջօրէն աշխատիլ, կանխարգիլելու համար ահաբեկչական յարձակումները: 11 Սեպտեմբերին, Իսրայէլի կառավարութիւնը սկզբնական որոշում մը տուած էր Արաֆաթը «հեռացնելու»՝ պայման զլիսաւոր խոչընդոտը նկատելով խաղաղութեան գործընթացին: Որոշումը ընդվզումի ալիք մը բարձրացուցած էր պաղեստինեան ու արաբական շրջանակներու մէջ:

Կառավարութեան Կիրակի օրուան նիստին, Շարոն ըսաւ նաեւ, որ որեւէ պարագայի տակ չի ընդունուի չկատարել Իսրայէլի ու անոր բնակչութեան ապահովութեան մասին: Շարոն շեշտեց, որ չի ընդունուի չկատարել, ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ոչ ալ ապագային: Խօսելով ապահովութեան պատի կառուցման մասին, Շարոն ըսաւ, որ անիկա ապահովութեան համար կենսական է: Այս

գծով, Շարոն այս շաբթուան մէջ Ռուսիան ուղարկէ բնակեցման հարցերու նախարար Էֆի Էրամը, որ պիտի փորձէ ամերիկացիները համոզել պատին կարեւորութեան ու անհրաժեշտութեան մասին: Էրամ ըսաւ, որ պատը կենաց-մահու հարց է Իսրայէլի ժողովուրդին ապահովութեան համար: Ան աւելցուց, որ ամերիկացիները կրնան չհամոզուիլ, սակայն պատը պիտի կառուցուի: Ռուսիակը իսրայէլէն պահանջած է պաղեստինեան հողերու վրայ չկառուցել «ապահովութեան» պատը, որ ամբողջ Այսրոյրդանան կը բաժնէ Իսրայէլին: Իսրայէլ կ'ուզէ պատը անցընել Այսրոյրդանանի մէջ գտնուող բնակեցման վայրերու շուրջ՝ անուղղակի կերպով շրջափակելով պաղեստինեան գիւղեր ու շրջաններ:

ՔՐՈՒՅ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿԸ ՃԱՐՈՒՆԱԿԷ

Պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քոբէյ, որ կ'աշխատի կապուելու համար նոր կառավարութիւն, խոստացաւ լուծում մը գտնել ապօրինի վէճերու հարցին: Քոբէյ ըսաւ, որ բոլոր շարժումներն ու թելերը համաձայն են, որ վերջ պէտք է տրուի պաղեստինեան փողոցին քառսին, որ կը հասնի նաեւ պաղեստինեան վարչաձեւքենային եւ բնակչութեան մտայնութեան:

Պաղեստինեան շրջաններուն մէջ հասարակարար ապօրինի վէճեր կը գտնուին ծայրայեղական շարժումներու պիւնակներու մէջը:

Քոբէյ շարաքակերջին Կապալի մէջ բանակցութիւններ կատարուեցին:

Շարք՝ էջ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՅԹԻ ՓՈԽ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՀԵՐՔԷ ԹՐԲԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՁ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԻՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի մշակոյթի փոխ նախարար Կարէն Արիստակէսեան Սեպտեմբեր 21ին վերադարձաւ Անթալիայէն, ուր մասնակցած էր Հայաստանի, Արցախի, Վրաստանի եւ Թուրքիոյ մշակոյթի նախարարներու խորհրդածոյցին, եւ, ըստ թրքական մամուլին, յայտարարած էր, թէ «ժողովուրդները պէտք է մոռնան անցեալի վատ իրադարձութիւնները»:

Պատասխանելով «Երկիր» շաբաթաթերթի հարցումներուն, Արիստակէսեան երէկ յայտնեց. «Ես այդպիսի յայտարարութիւն չեմ կատարած. իմ էլոյթիս մէջ Յեղասպանութեան մասին խօսք չկար»: Ան նշած է, թէ ինք արտայայտուած է բարեկամական յարաբերութիւններու հաստատման մասին, սակայն միայն մշակութային համագործակցութեան ծիրէն ներս, «եւ որովհետեւ խորհրդածոյցին կը մասնակցէին Կովկասեան պետութիւններու մշակոյթի տարբեր նախարարներ, խօսքը ուղղուած էր բոլորին, եւ ոչ յատկապէս թրքական կողմին»:

«Թուրքիոյ մէջ էլոյթ ունեցալ հայերէն, իսկ թէ թրքական մամուլը ի՞նչպէս աղաւաղած է խօսքս, չեմ գիտեր», յայտնած է Հայաստանի մշակոյթի փոխ նախարարը, աւելցնելով, որ կը պատրաստուի հանդէս գալ յատուկ յայտարարութեամբ, ինչպէս նաեւ հրապարակել Թուրքիոյ մէջ իր էլոյթին բովանդակութիւնը:

«Երկիր» կը հաղորդէ, թէ Անթալիոյ մէջ Կարէն Արիստակէսեանի էլոյթին լոյսին տակ, Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը բացատրութիւն պահանջած է մշակոյթի նախարարէն:

Նախքան Անթալիա մեկնելը, Հայաստանի մշակոյթի փոխ նախարարը «Երկիր»ի հարցումին պատասխանելով յայտնած էր, թէ Թուրքիոյ մէջ պիտի չարժարծէ Թուրքիոյ եւ Նախիջեւանի մէջ ոչ չազնուոյ պատմական յուշակոթողներու խնդիրը, այսուհանդերձ ան երէկ տեղեկացուցած է, թէ Անթալիոյ մէջ այդ խնդիրը արծարծուած է:

ԵՐԵՎԱՆԻ ՄԷՁ

ՎԱՏԻԿԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Սեպտեմբեր 21ին ընդունեց Վատիկանի արտաքին գործոց նախարար Մոնսէնիէօր Ժան-Լուի Թորանը:

Հանդիպման ընթացքին կողմերը քննարկեցին երկկողմանի յարաբերութիւններու պարզացման հետապնդումները: Նշուեցաւ, որ Երեւանի եւ Վատիկանի միջեւ խնդիրներ գոյութիւն չունին, իսկ երկու կողմերը հետամուտ են համագործակցութեան ընդլայնման: Նախագահ Քոչարեան դրուատեց Վատիկանի դերը ոչ միայն իբրեւ հոգեւոր կեդրոն, այլեւ՝ իբրեւ մարդկային իրաւանց եւ բարոյական օրէնքներու պաշտպան, աշխարհի մէջ խաղաղութեան եւ կայունութեան պահպանման շտապով:

Կողմերը անդրադարձան Երեւանի մէջ Վատիկանի դիւանագիտական ներկայացուցչութեան բացման հնարաւորութիւններուն: Անոնք արծարծեցին շրջանային պարզացումներու եւ միջազգային հրատապ խնդիրներու կապուած հարցերը:

Վատիկանի արտաքին գործոց նախարարը հանդիպում ունեցաւ իր հայ պաշտօնակիցին՝ Վարդան Օսկանեանի հետ: Երկկողմանի յարաբերութիւններու պարզացման կարելիութիւններուն ու Վատիկանի միջազգային առաքելու-



թեան շուրջ քննարկումներուն կողքին, նախարար Օսկանեան ներկայացուց Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման ներկայ ընթացքը եւ սպասուող պարզացումները:

Վատիկանի արտաքին գործոց նախարարը այցելեց նաեւ Ս. Էջմիածին, ուր հանդիպում մը ունեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին հետ:

ԻՍՐԱՅԵԼԵԻ ՀՆԳՎԱԿԱՆ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԻՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ

ԷՁ 6

ՊԵՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԻՐԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երեկ իր գրասենյակին մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին, որուն հետ քննարկեց Խաղաղ կատարած իր պաշտօնական այցելութեան արդիւնքները:

Պերրիի այցելեց արտաքին հարցերու երեսփոխանական յանձնախումբի նախագահ երեսփոխան Ալի Խալիլի. քննարկուեցան արաբական միացեալ խորհրդարանի մը կապմութեան նպատակով տեղի ունենալիք խորհրդածողովի պատրաստութիւնները: Խորհրդածողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Փետրուարին, Պերրիի նախագահութեամբ:

Պերրիի այցելուներէն էին նաեւ ճարտարարւեստի նախարար Էլիաս Սքաֆ, երեսփոխաններ Միխայիլ Տախէր, Պահիա Հարիրի, Նասեր Քընտիլ, Ալի Պապի եւ Ֆարիտ Խապէն, ինչպէս նաեւ Չախիլի քաղաքապետ Ասատ Չոդէյպ:

ՓԱՐԻՉ ՍՏԱԴԻՐ ՉԷ ՎԵՐՈՅԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ...

Շարունակուած Ա. Էջէն

ձեռնպահ պիտի մնայ, ըսաւ Շիրաք: Ան դիտել տուաւ նաեւ, որ գերիշխանութեան փոխանցումը անմիջապէս պէտք է իրականանայ, իսկ պատասխանատուութեանց փոխանցումը՝ յառաջիկայ 6-9 ամիսներուն ընթացքին:

Միացեալ Նահանգներ շախատանք կը տանին Ապահովութեան Խորհուրդին մէջ որդեգրելու համար բանաձեւ մը, որ կը լիազօրէ բազմազգեան ուժերու կապմութիւնն ու առաջումը Իրաք՝ մեղմացնելու համար Ուաշինգթոնի պիտուրական ու նիւթական բեռը:

Շիրաք վերստին շեշտեց, որ Ֆրանսա տրամադիր չէ ուժ ուղարկելու Իրաք, բայց պատրաստ է մարկելու իրաքցի պինդորներ եւ ոստիկաններ:

● ԻՐԱԿԻ ԻՉԽՈՂ ԽՈՐՀՈՐԴԷՆ անդամներ ամերիկեան Քոնկրէսին կոչ պիտի ուղղեն, որ ճնշում բանեցնէ՝ իշխանութիւնը շուտով խորհուրդին փոխանցելու համար, հաղորդեց «Նիւ Եորք Թայմս» օրաթերթը: Յիշեալ աղբիւրը աւելցուց, որ իշխող խորհուրդը մասնաւոր պատուիրակութիւն մը կ'ուղարկէ այս շաբաթ Ուաշինգթոն՝ համոզելու համար ամերիկեան իշխանութիւնները:

(ԱՖՓ)

ՄԱՀԱԶԴ

Տիկին Թագուհի Հապէշեան

- Տէր եւ տիկին Լեւոն Հապէշեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Ռաշիկ Հապէշեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Վաչէ Հապէշեան եւ զուստորը
- Տէր եւ տիկին Վաչէ Չաքրբեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Աւետիս Մկրտիչեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Փանոս Տրդատեան եւ զաւակունք
- Տիկին Մարանուշ Ճըրրիեան
- Տէր եւ տիկին Ասատուր Հապէշեան եւ զուստորը
- Տէր եւ տիկին Փիթր Ուրֆայեան եւ զաւակունք
- եւ համայն զազականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ, հօրեղբոր եւ հարազատին՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՊԵՇԵԱՆԻ
(ՕՃԵԱԼ՝ 1937ԻԸ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 21 Սեպտեմբեր 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի շէնքեր, Երեքշաբթի 23, Չորեքշաբթի 24 եւ Հինգշաբթի 25 Սեպտեմբերին:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Անի Թիթիւնճեան եւ զաւակները՝
- Նանիկ եւ Վիգէն
- Տէր եւ տիկին Տէյփիտ եւ Ալին Մանուկեան
- եւ զուստորը
- Կէպէշեան ընտանիք
- Արապեան ընտանիք
- Մանուկեան ընտանիք
- եւ համայն զազականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, աներոջ, մեծ հօր, քեռայրին եւ հարազատին՝

ԿԱՐՕ ԹԻԹԻՒՆՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 22 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 4:00ին, Յունական հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրոն Երպիւնի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, Ենուսփեան շէնք, Տրդայրի, Երեքշաբթի 23 Սեպտեմբերին:

ՆԱԽԱԳԱԸ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԸ ԹԵԼԱԴՐԷ ԱՆՍԱԼ ԵՐԿՐԻՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԸԱՐՅԵՐՈՒՆ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լաշուտ շեշտեց, որ պետութիւնը հրաւիրուած է ընկերային մարզին մէջ ուշադրութիւն դարձնելու, նկատել տալով, որ քաղաքացիին հիմնական հոգն է ընկերային, առողջապահական եւ կրթական հոգաւորութիւնն ապահովել իր եւ իր զաւակներուն, ինչպէս նաեւ վստահ ըլլալ, թէ իր ժերութիւնը ապահովագրուած է:

Նախագահ Լաշուտ ընդգծեց, որ պատասխանատուներուն կողմէ կարելի չէ անտեսուած գուցարները ժողովուրդին առջնահերթութիւններուն, այսինքն՝ անտեսել անոնց պահանջներն ու կարիքները: «Ընդհակառակն, հարկ է քաղաքական եւ ապահովական կայունութեան կողքին ամբապնդել նաեւ ընկերային կայունութիւնը, որպէսզի կարենանք պաշտպանել Լիբանանի քաղաքական կեանքն ու ապահովական իրավիճակը», աւելցուց ան:

Նախագահ Լաշուտ ընդգծեց, որ պետական հաստատութիւնները եւ անոնց վարչութիւնները չգործակցին քաղաքացիին հետ եւ անոնց յատկացուած ծրագիրներուն հետ, ընկերային մարզը բարելաւելու ամէն ճիգ կը մատուցուի ճարտարութեան, որովհետեւ քաղաքացի կարիքը ունի իր պահանջներուն անսացող պատասխանատուներու: «Ճիշդ է, որ կառավարութիւնը միանգամայն չի կրնար գործադրել ժողովուրդին բոլոր պահանջները, սակայն կրնայ լսել ժողովուրդին եւ այդպիսով քաղաքացի - պետութիւնը յարաբերութիւնը վստահութեամբ կ'ամրապնդուի եւ երկիրը դիւրաւ կը բարգաւաճի», ըսաւ ան:

Մյս յայտարարութիւնները նախագահ Լաշուտ կատարեց Պատասխան մէջ, ուր ընդունեց Լիբանանի թաղապետներու պատուին քաղաքական կեանքն ու ապահովական իրավիճակը», աւելցուց ան:

Նախագահ Լաշուտի այցելեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչարդ Քինչըն: Քինչընը Լիբանանի քաղաքական կեանքին մասին լիբանանաւորներէն երկկողմանի յարաբերութիւնները եւ պանոնք բարելաւելու հետեւեալները:

Նախագահ Լաշուտի այցելեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչարդ Քինչըն: Քինչընը Լիբանանի քաղաքական կեանքին մասին լիբանանաւորներէն երկկողմանի յարաբերութիւնները եւ պանոնք բարելաւելու հետեւեալները:

Նախագահ Լաշուտի այցելեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչարդ Քինչըն: Քինչընը Լիբանանի քաղաքական կեանքին մասին լիբանանաւորներէն երկկողմանի յարաբերութիւնները եւ պանոնք բարելաւելու հետեւեալները:

Միւս կողմէ, նախագահ Լաշուտ երէկ շնորհատրական հեռագիր մը յղեց Ֆահտ Պըն Ապտէլապիլ թագաւորին՝ Սէնտական Արաբիոյ Ազգային տօնին առիթով:

Միւս կողմէ, նախագահ Լաշուտ երէկ շնորհատրական հեռագիր մը յղեց Ֆահտ Պըն Ապտէլապիլ թագաւորին՝ Սէնտական Արաբիոյ Ազգային տօնին առիթով:

ԱՍՏՈՒՄ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԶՕՐ. ԱՌՆԻ ԹՂԹԱԾՐԱՐԸ

Ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուժ երէկ նշեց, որ ամերիկեան Քոնկրէսին մէջ ԿՕՐ. Միշէլ Աուի կատարած հակաառաջիկայ յայտարարութիւնները պիտի քննարկուին դատախաչութեան կողմէ:

Ատտուժ ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէնէն պահանջեց ԿՕՐ. Աուի կատարած յայտարարութիւններուն ամբողջ բովանդակութիւնը:

Ատտուժ աւելցուց, որ եթէ ի յայտ գայ, որ ԿՕՐ. Աուի հաղորդակցութիւններ ունեցած է Իսրայիլի հետ, ապա ան պիտի դատապարտուի դատաւարութեան յանցանքով:

Ատտուժ ընդգծեց, որ ԿՕՐ. Աուի թղթածրարին վերաբացման որոշումը կախեալ է արդարութեան նախարար Պահիժ Թապաւարայէն:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՍՕՏԷՆ ԿԸ ՀԵՏԵԻ ԵՐԿՐԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒՆ



Հարիրի եւ ԿՕՐ. Մանուր

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ վարչապետարանին մէջ ընդունեց Պէյրութի եւ Հիւսիսային Լիբանանի բժիշկներու սենտրալի նախագահներ Մահմուտ Շուքէյրն ու Իպրահիմ Ճուխատարը, ներկայութեամբ սեփական հիւանդանոցներու սենտրալի նախագահ Սլէյման Հարունի:

Հանդիպումին քննարկուեցան առողջապահական մարզը յուլող հարցեր:

Այցելուները յոյս յայտնեցին, որ նշեալ հարցերով զբաղող նախարարական յանձնախումբը աշխուժ դերակատարութիւն կը ցուցաբերէ հարցին լուծման համար, որովհետեւ երկրին առողջապահական մարզը ներկայ իրավիճակով չի կրնար գոյատեւել, ինչ որ մերժելի է թէ՛ քաղաքացիին եւ թէ՛ պետութեան կողմէ:

Հանդիպումին ետք Շուքէյր յայտնեց, որ վարչապետ Հարիրիի հետ քննարկուած առաջադրութեան շնորհիւ նաեւ բժիշկները ապահովագրելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ լիբանանացի բժիշկները իրաւունք ունին ամբողջական ապահովագրութիւն ստանալու:

Վարչապետ Հարիրիի այցելեց երեսփոխան Ֆայսալ Տաուուս, որը շեշտեց ԿՕՐ. Միշէլ Աուի կատարած հակաառաջիկայ յայտարարութիւններուն խստիւ կատասխանելու անհրաժեշտութիւնը:

Վարչապետ Հարիրի ընդունեց երեսփոխան Քարիմ Ռասիւն, որուն հետ քննարկեց հիւսիսային Լիբանանի կարիքները, յատկապէս բարգաւաճման եւ վերաշինութեան մարզին ներս մշակուած ծրագիրներու գործադրութեան ընթացքը ձգձգումի ենթարկելու առնչութեամբ:

Վարչապետարանի այցելուներէն եղան նաեւ երեսփոխան Միխայիլ Տախէր, Լիբանանեան Համայնարանի նախագահ Իպրահիմ Քըպայիսի, պետական անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն ԿՕՐ. Էտուար Մանսուր եւ նախկին երեսփոխան Նուհատ Աուայտ:

Կրթական նախկին նախարար ԱՊՏԸԼ ՌԱՀԻՄ ՄՐԱՏԻ վկայութիւնը ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃԻ

30-ամեակին առթիւ

«...Լիբանանի մէջ թեքնիք ուսման ճամբուն վրայ մեծ է ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃԻ ներդրումը: Այս գոյէճի արձանագրած յաջողութիւնը ինքնին աղաղակող փաստ է, թէ ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ 30 տարուայ ընթացքին յաջողած է իր առաքելութեան մէջ եւ շահած նախարարութեան ամբողջական վստահութիւնը: 30ամեակին առթիւ, որպէս կրթական նախարար կը շնորհաւորեմ շրջանաւարտները եւ քոլէճի հիմնադիր-տնօրէն պրն. Պետրոս Շեմմէսեանը...»:

Խօսուած՝ Ուրբաթ, 12 Յուլիս, 2002, վկայականաց բաշխման հանդէսի ընթացքին



galerie PIERROT

Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans



galerie PIERROT

Liste de Naissance et de Bâpteme

Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ԿՈՒՉՈՒՆ ԿՈՒՉՈՒՆ

- Այր մարդու շապիկ կարող փորձառու գործաւորակներ: Դիմել՝ հեռ. 01-259196:
- Երիտասարդ վաճառող մը հազուատեղէնի մարզին մէջ (փլայիտ), հնք-նշարժ վարելը պայման: Դիմել՝ հեռ. 03-821600:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉԱՐԱՊՅՆ ՀԻՄՆԱՐԿ

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Կամալաւարանի)

Կամալաւարանի Կայսերական Բարձրագոյն Հիմնարկի 2003-2004 տարեշրջանի հիմ թէ նոր ուսանողներու արձանագրութիւնները կը շարունակուին առաւօտեան ժամը 10:00ԵՆ 1:00, Եղեղեղի Սելանքոն եւ Կայս Արալանեան ձեմարանի մեր գրասենյակներէն ներս:

Կետաբերուողները կրնան անձամբ դիմել գրասենյակ, եւ կամ կայսերական Կետալան՝ 04-712603
04-712604
03-429685

Fax: 04-712601
E-mail: djemaran@inco.com.lb
Ստուգիք բնութիւնները՝ 1-3 Կոկտեմբեր 2003ին: Կերամուտ՝ 6 Կոկտեմբեր 2003ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ՔԱՆԻ ՄԵ ՏՈՂՈՎ

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նարայի Սֆէյր պատրիարքը երէկ Պքերքէի մէջ ընդունեց երեսփոխան Պոլոթոս Հարպը, որին հետ քննարկեց տեղական եւ շրջանային վերջին իրադարձութիւնները:

Հանդիպումէն ետք Հարպ յայտնեց, որ Սֆէյր պատրիարքը բարի ճանապարհ մաղթած է անոր եւրոպական շրջապտոյտին առիթով:

Անդրադառնալով Պապատա - Ալէյի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն, Հարպ դիտել տուաւ, որ ընտրութիւններուն ընթացքին ժողովրդավարութիւնը յաղթանակած է:

Չոր. Միշէլ Աունի հակատրիակական կեցածքներուն եւ յայտարարութիւններուն ակնարկելով, Հարպ ըսաւ, որ ինք համաձայն չէ անոնց, բայց դիտել տուաւ, որ Լիբանան - Սուրիա յարաբերութիւնները այդքան ալ հեզասահ չեն, որովհետեւ գոյութիւն ունի Լիբանանի գերիշխանութիւնը:

Սֆէյր պատրիարքը ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ լը Քուրթիէն, որուն հետ քննարկեց Եւրոպա կատարելիք իր շրջապտոյտին պատրաստութիւնները:

Սֆէյր պատրիարքը իր կատարելիք հովուապետական այցելութեան ընթացքին պիտի մեկնի նաեւ Փարիզ, ուր հանդիպում մը պիտի ունենայ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի հետ:

● ՉԱՂԼԵԻ Սերային առջեւ երէկ ձեռնարկեցին Գանքով վրադող երկրագործները կատարեցին բողոքի ցոյց մը, որուն ընթացքին կառավարութեան պահանջեցին իրենց ցանքին օժանդակութիւն եւ պարակցութիւն ցուցաբերել: Յոյցին մասնակցեցան մեծ թիւով նախարարներ, երեսփոխաններ, կրօնապետներ, քաղաքապետներ եւ բարձրաստիճան ալ անձնաւորութիւններ:

● ՓՈՒՍ Վարչապետ Իսամ Ֆարէս երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ուքրանիոյ դեսպանը, որմէ իմացաւ իր գլխաւորած լիբանանեւուքրանական նախարարական յանձնախումբին աշխատանքները աշխուժացնելու համար ի գործ դրուող ջանքերուն մասին:

● ԵԼԵԻՍՈՒՏՔԻ եւ պետական պիտմէի երեսփոխանական յանձնախումբը, նախագահութեամբ երեսփոխան Սամիր Ալպարի, գումարեց իր հերթական նիստը, որուն ընթացքին քննարկեց եւ վաւերացուց բեռնակառքերու ծանրութեան յատուկ օրինագիծ մը եւ վաւերացուց վայն:

● ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Մահմուտ Համմուտ երէկ ընդունեց երեսփոխան Անթուան

Հատուտը, որուն հետ քննարկեց բարեկարգումներու արշաին զօրակցութեան եւ օժանդակութեան անհրաժեշտութիւնը, յատկապէս տնտեսական մարզին վերաբերեալ:

● ՍՐԳՍՐԱՂԱՏՈՒԹԵԱՆ եւ վարչական հարցերու երեսփոխանական յանձնախումբը նախագահութեամբ երեսփոխան Միխայիլ Տահէրի երէկ գումարեց ժողով մը, որուն ընթացքին քննարկեց հիւանդներուն իրաւունքները: Ժողովը յանգեցաւ նշեալ իրաւունքներուն առնչուող օրէնքը վերամշակելու որոշումին:

● ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ նախարար Միշէլ Սըմահա երէկ ընդունեց երեսփոխան Պահիա Հարիրին, որուն հետ քննարկեց Լիբանանի անկախութեան 60ամեակի հանդիսութեան առնչուող պատրաստութիւնները:

● ԿԵՆՍՈՒՈՐՏԻ նախարար Ֆարէս Պուէյլ երէկ Հարածէյի մէջ կատարած իր դասախօսութեան ընթացքին շեշտեց, որ Լիբանան կարիքը ունի շուրի կտան 22 հիմնական կայաններու, որպէսզի կարելի ըլլայ շուրիերը վերածել ընկերի շուրի, իսկ կարիքը ունի նաեւ 25 աղբանոցներու: Պուէյլ անդրադարձաւ նաեւ քարահանքերու հարցին եւ առաջարկեց կազմել ազգային խորհուրդ մը նշեալ թղթածրարին քննարկման համար:

● ՇԻՒՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միֆթի շէյխ Ապտէլ Էմիր Քապալան երէկ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրպլիի հետ: Քննարկուեցան երկրին ընդհանուր կացութիւնը, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:

● ՀԸՉՊԱՍԼԱՅԻ հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալա երէկ ընդունեց երեսփոխան Եսահի ժապէրը, որ ցաւակցութիւն յայտնեց Իրաքի կրօնապետ այաթոլլա Մոհամէտ Պաքէր Հաքիմի սպանութեան առիթով: Քննարկումի առարկայ դարձան նաեւ ներլիբանանեան հարցեր եւ շրջանային վարձեցումները:

● ՔՐԻՍՏՈՆԵԱՅ - ԻՍԼԱՄ ազգային հանդիպումը, ներկայութեամբ պետական նախարար Միշէլ Մուսայի, երէկ Սայտայի մէջ գումարեց հանդիպում մը, որուն ընթացքին դատապարտեց Սուրիոյ դէմ մղուող ամերիկեւիտական պայքարը, ինչպէս նաեւ չոր. Միշէլ Աունի կատարած հակասուրիական յայտարարութիւնները ամերիկեան Քոնկրէսին մէջ:

● ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի երէկ քաղաքային օդանաւորութեան մարզին

ներս գործակցութեան համաձայնագիր մը ստորագրեց չեխ իր պաշտօնակիցին՝ Փաւել Նեմէքի հետ:

السيرة المستقبل الذمى التمشير السفير

ԻՆՉ ԿԸ ԳԻՔԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Երկուշաբթի, 22 Սեպտեմբերին լոյս տեսած լիբանանեան օրաթերթերուն մէջ իրենց հիմնական նիւթ դարձեալ Իսրայէլի եւ Հրեայալի միջեւ գերիներու փոխանակման գծով տեղի ունեցող բանակցութիւնները իրենց առիծի բաժինը կը գրաւեն: Բացի այս, տեղական մակարդակ վրայ քննարկման նիւթ դարձող այլապէս թղթածրարներ, Համաս շարժումի Լիբանանի մէջ պահ դրած գումարներուն բացալայտումը եւ այլ հարցեր կը մնան լիբանանեան մամուլին ուշադրութեան առարկան:

Շրջանային եւ միջազգային մակարդակներու վրայ յատկանշական էր լիբանանեան մամուլին անդրադարձը այն լրատուութեան, որ կը խօսէր Իրաքէն հեռանալու շուրջ Մատամ Հիւսէյնի ամերիկացիներուն հետ տարած հաւանական բանակցութիւններուն մասին: Երէկ լոյս տեսած լիբանանեան օրաթերթերուն մէջ լուրեր կային նաեւ Իրաքի մէջ գտնուող ամերիկեան բռնագրաւող ուժերուն դէմ ծաւալած դիմադրութեան, Տուպայի մէջ այսօր բացուող Միջազգային Դրամական Ֆոնտի եւ Համաշխարհային Դրամական Ժողովներուն եւ պաղեստինեան կառավարութիւնը արգելակող դժուարութիւններուն մասին:

ԳԵՐԻՆԵՐՈՒ ՓՈՒՍՆԱԿԱՍԱԳՈՐԾԵԼԹԱՅԸ ԿԸ ՍՕՏԵՆԱՅ ԻՐ ԱԲԱՐՏԻՆ

Իսրայէլի եւ Հրեայալի միջեւ գերիներու փոխանակման հարցին շուրջ տեղի ունեցած բանակցութիւններուն երկէ «Մաֆիր» օրաթերթը ընդարձակ ռեփորթ մը հրատարակած էր իր առաջին էջին վրայ՝ թերթի մնալուն սինակագիր Իպրահիմ Էմիրի ստորագրութեամբ: Այս ռեփորթը ժին մէջ կը նշուի, որ գերիներուն ազատ արձակման գործընթացը կը մօտենայ իր աւարտին: Այս գծով տեղի ունեցող բանակցութիւնները կ'ընդգրկեն հարաւային Լիբանանի տարածքին վետեղւած ականներուն քարտէսներուն, նահատակներու աճիւններուն եւ լիբանանցի պաղեստինցի ու արաբ հարիւրաւոր գերիներու յանձնումը:

Այս ծիրին մէջ Հրեայալի ընդհանուր քարտուղար Հասան Նարալլա թերթին ըսած է, թէ ինք անձնապէս բանակցութիւններու գլխաւոր միջնորդ գերմանացիներուն խոստացած է իր առաւելագոյն ձեռքը ի գործ դնել իսրայէլացի կորսուած սպայ Ռոն Արատի ճակատագիրը բացայայտելու: Հրեայալի մէկ աղբիւրը թերթին յայտնեց, թէ կուսակցութեան մօտ գտնուող իսրայէլացի

չորս գերիներէն գնդ. Հանան Նարալլա պաղեստինցիներուն հետ բանակցութիւններ կը վարէ Իրաքէն հեռանալու կապակցութեամբ եւ իր անձնական պատուիրակը կը հանդիպի ՍանՉԿԿԻ հետ:

«Մաֆիր» օրաթերթը կը հաղորդէ, թէ իրաքեան դիմադրութեան անդամներուն արձակած կրակէն երեք անձերի կացին եր սպաննուած են, իսկ 13 ուրիշներ՝ վիրաւորուած: Քրտանական փեշմերկայի ղեկավարութիւնը ամերիկեան բռնագրաւող ուժերէն խնդրած է իրենց յանձնել Մատամը ձերբակալելու պարտաւորութիւնը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԸՆԹԵՐ

Միացեալ Նահանգներու Քոնկրէսին կողմէ կոչուած «Սուրիոյ հաշուետուութեան օրինագիծ»-ին եւ այս առիթով չոր. Միշէլ Աունի կեցածքին գծով լիբանանեան դատապարտող հակադէմոստրացիոնները կը շարունակուին: Այսպէս, ըստ «Տիար» օրաթերթին, Մարոնիներու պատրիարք Նասրալլա Սֆէյր ըսած է, թէ համաձայն չէ «Սուրիոյ հաշուետուութեան օրինագիծ»-ին, իսկ նախարար Ասէմ Քանսո կոչուող մէկ դատավարութեան ենթակելու Աունը:

Միւս կողմէ, թերթը կը հաղորդէ, թէ սեփականութեան, «Սուրիոյ»-ի եւ բիշոյի հեռաձայնի հարցերը այս Հինգշաբթի քննարկման նիւթ պիտի դառնան նախարարաց խորհուրդի ժողովին ընթացքին:

«Անուար» իր կարգին գրած էր, թէ իշխանութեան պետերուն միջեւ համերաշխութեան մթնոլորտը խանգարող թղթածրարներ դարձեալ իրապարակ կը նետուին, իսկ կրթական տարեշրջանի ծախսերը կը կրկնապատկեն մարդոց մտահոգութիւնները այնպիսի ծամանակաշրջանի մը մէջ, երբ կառավարութիւնը իր գոյութիւնը չ'արդարացներ:

«Նահար» օրաթերթը նշած էր, որ Լիբանան առաջին անգամ ըլլալով կը բացայայտէ լիբանանեան դրամատուներուն մէջ պահ դրուած Համասի հաշիւները:

ՍԱՏՏԱՍԸ ԻՐԱՔԵՆ ԸՆԹԱՑՆԵԼՈՒ ԳԱՂՏԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

«Անուար» օրաթերթը հաղորդած է Մատամը Իրաքէն հեռացրելու գաղտնի բանակցութիւններու մասին բրիտանական տեղեկութիւն մը, զոր հերքած է ամերիկեան բռնագրաւող բանաւորներու ղեկավարութեան գործողութիւնները կը շարունակուին: Նմանօրինակ գործողութեան մը իբրեւ արդիւնք սպաննուած են ինկ սպաննուած են ինկ սպաննուած են 13 ուրիշներ:

Ըստ «Տիար» օրաթերթին, Իրաքի նախ-

կին նախագահ Սատամ Հիւսէյն ամերիկացիներուն հետ բանակցութիւններ կը վարէ Իրաքէն հեռանալու կապակցութեամբ եւ իր անձնական պատուիրակը կը հանդիպի ՍանՉԿԿԻ հետ:

«Մաֆիր» օրաթերթը կը հաղորդէ, թէ իրաքեան դիմադրութեան անդամներուն արձակած կրակէն երեք անձերի կացին եր սպաննուած են, իսկ 13 ուրիշներ՝ վիրաւորուած: Քրտանական փեշմերկայի ղեկավարութիւնը ամերիկեան բռնագրաւող ուժերէն խնդրած է իրենց յանձնել Մատամը ձերբակալելու պարտաւորութիւնը:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՅԼ ԻՐԱԿԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

«Անուար» գրած է, թէ պաղեստինեան իշխանութիւններու նոր նշանակուած վարչապետ Ահմէտ Քուրթի իր կառավարութեան կազմութեան համար հանդիպում ունեցած է Կապայի մէջ գործող պաղեստինեան կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ, իսկ Համաս եւ ժիհաւ մերժած են մասնակցիլ կառավարութեան:

«Նահար» կը հաղորդէ, թէ Տուպայի մէջ կայացող Միջազգային Դրամական Ֆոնտի եւ Համաշխարհային Դրամատու ժողովներուն շրջագիծին մէջ, Իրաքը թերթը շուրջապարակ տնտեսութիւնը եւ ողջունած է օտար դրամատուները եւ ներդրումները Իրաքի մէջ:

«Նահար» նաեւ նշած է, որ Միացեալ Նահանգներու նախագահական թեկնածու Ռեյլի Քլարքի հեղինակութեամբ լոյս տեսնելիք նոր գիրքի մը մէջ հեղինակը բացայայտած է Սուրիոյ, Լիբանանի եւ Իրանի դէմ ամերիկեան կազմակերպութեան պատերազմի մը ծրագիրին գոյութիւնը:

«ՎԱՆՅ ԶԱՅՆ»-Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն 9:40 «Առաւօտեան տոն» 9:45 «Աստղիկ». կնջակց յայտագիր. Գիւթ՝ վերամուտի պատրաստութիւնները 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն 3:00 Արաբերէն յայտագիր. Կարգադրոյց լրագրող Իսմայիլ Կիլիսի հետ. կը խօսի պատկերասփիւռի «Մաքար» կայանէ սփռող «Հատիկ Ալսա» իր յայտագիրը մասին եւ կ'արծարծէ լրատուութեան վերաբերեալ ճիշտը 5:00 «Տեսկետ». Գիւթ՝ կենցաղավարութիւնը եւ քաղաքակրթարկները. կը խօսի Շահանդուխտ եւ Գեղամի Եթիեմէան. 8:00 «Մարգարտ». խաղ-մրցանք. ուղղակի ձայնապահում

ԼՕՒԻ «ԱՐԱՔՍԻ ՊՈՒՂՈՒՐՃԵԱՆ» ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԳՐՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՏԵԿ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԱԾԽԱՍԱՆՔԻ ԿԱՆԱՐԳԻԼՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կիրակի, 19 ՇՈՎՏԵՄԲԵՐ 2003ԻՆ ՍԱՍՆԱԿՅԵ՛ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՌԱՋԻՆ ՍԱՐԱԹՈՆԻՆ

11ԵՆ 17 տարեկան բոլոր այն աշխատող պատանիները, որոնք կը փափաքին մասնակցիլ Պէյրութի Միճի - Մարթոնի (4.22 քմ.), պարտին ցերեկայանալ ԼՕՒԻ «Արաքսի Պուլըրճեան» Ընկերա - Բժշկական կեդրոնի Ընկերային Գրասենեակ, Երկուշաբթի 22 եւ Երեքշաբթի 23 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 8:00ԵՆ կէսօրէ ետք ժամը 4:00:

ԼՕՒԻ միջոցով այս Մարթոնի ցերեկայանող աշխատող պատանիները առիթ պիտի ունենան ձրիօրէն մասնակցելու համաշխարհային առում ունեցող այս մրցանքին:

Միճի - Մարթոնի առաջին դիրքերը գրաւողները պիտի պարգեւատրուին 100\$-500\$ նիւթական պարգեւներով:

Միճի - Մարթոնը պիտի սկսի Պէյրութի Նահատակաց Երապարակէն, Կիրակի, 19 Շովտեմբեր առաւօտեան ժամը 9:00ԵՆ:

ՁԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«ՎԱՆՅ ԶԱՅՆ»ԷՆ ԱՄԷՆ ԵՐԵՔՐԱԲԹԻ ԼՍԵՅԷՔ «ՏԵՍԱԿԵՏ» ՅԱՅՏԱԳԻՐԸ

Այսօր՝ Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ԵՆ,

«ՏԵՍԱԿԵՏ»

յայտագիրին նիւթն է՝

«ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՂՐԵԼԱԿԵՐՊ»

Կը խօսին՝

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԳԵՂԱՆԻ ԷԹԻԵՄԷՉԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցէ «Վանայ Զայն»՝ 01-241199 եւ 01-267657 թիւերուն, ու տուրք ձեր կարծիքը:

ՀԱՅ ԱԷԵՏ. Փ. ԵՒ Է. ԹՈՐՈՍԵԱՆ ՄԻՋՆ. ՎԱՐԺԱՐԱՆ

Հայ Աւետարանական Թորոսեան վարժարանը բացած է իր դռները աշակերտներու դիմաց: Արձանագրութիւնը արդէն սկսած է եւ կը շարունակուի մինչեւ Սեպտեմբեր 30: Երկուշաբթի Թորոսեան առաւօտեան ժամը 8:00ԵՆ 1:00: Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել

- Նախորդ դասարանի վիճակագրոյց
- Աճճարձուղի լուսապատճեն եւ լուսանկար մը
- Բարի վարուց վկայագիր
- Պետութեան մօտ աշակերտի թիւը, վաւերացուած

Վերամուտ՝ Ընկտեմբեր 1 - Նախակրթարան եւ Միջնակարգ

Շնկտեմբեր 6 - Մանկապարտէզ

Շնկտեմբեր 1ի առաւօտեան ժամը 8:00ԵՆ կը հրաւիրենք Նախակրթարանի եւ Միջնակարգի ծնողները դպրոց իրենց գաւակներուն հետ ունենալու վերամուտի բացումը միաստաբար:

Շնկտեմբեր 6ի առաւօտեան ժամը 8:00ԵՆ կը հրաւիրենք Մանկապարտէզի ծնողները իրենց գաւակներուն հետ ունենալու Մանկապարտէզի վերամուտը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ ՏԱՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ

Հովանաւորութեամբ՝ ԱՉԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Lebanese Armenian Technical College

L.A.T.C.ի (Ազգային Քոլէճ) տնօրէնութիւնը

Կ'ընծայէ B.T.ի աշակերտներուն

ԱՆՎՃԱՐ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԾՐԱԳԻՐԷՆ ՕԳՏՈՒԵԼՈՒ ԱՌԻԹԸ

Մանրամասնութեանց համար դիմել՝ Ազգ. L.A.T.C.ի տնօրէնութեան, ամէն օր, ժամը 5ԵՆ 9:

Հասցէ՝ Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի շէնք, հեռաձայն՝ 01/244576:

Միջազգային Քաղաքական Կեանք

ԻՍՐԱՅԷԼԵՒՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ԻՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ



Իսրայելի եւ Հնդկաստանի միջեւ յարաբերութիւնները ամուր են. անոնք զարգացած են անցնող 42 տարիներու ընթացքին տեղի ունեցած գաղտնի կապերու ընդմէջէն: Իսկ վերջին տասը տարիներուն այս յարաբերութիւնները առաւել եւս ամրացած են եւ ռազմական, առեւտրական համագործակցութիւնը հասած է 1,6 միլիարտ տոլարի: Հետեւաբար, Շարոնի Հնդկաստան այցելութիւնը այս օրերուն, երբ Միջին Արեւելքը կը գտնուի անկիւնադարձային հանգրուանի մը, սովորական այց մը պէտք չէ համարել: Ահաբեկչութեան դէմ պատերազմի հովանոցին տակ Միացեալ Նահանգներու ներկայութիւնը տարածաշրջանին մէջ լուրջ հարցեր ստեղծած է շարք մը երկիրներու, յատկապէս՝ Իրանի, որ Միացեալ Նահանգներու կողմէ ընդգրկուած է «չարի առանցք»ին մէջ:

Շարոնի Հնդկաստան այցելութիւնը, որ երեւութապէս երկու երկիրներու մէջ ծայրայեղ իսլամականներու դէմ պայքարելու յանձնարարութիւնը վերահաստատելու համար էր, խորքին մէջ կը միտի վտանգաւոր նախաձեռնութեան մը՝ պաշարել Միջին Արեւելքը մէկ կողմէ՝ իրականացնելու համար ամերիկացիներու ցանկութիւնները եւ միւս կողմէ՝ հրեայ-հինտու շահերը հեռու պահելու համար իսլամներու հասողութեան: Շարոնի պաշտօնական բանքերը հաստատեց այս վարկածը Նիւ

Տելօրի մէջ իր կատարած հետեւեալ յայտարարութեամբ: «Մեր կապերը Հնդկաստանի հետ կը միտին ամրացնելու մեր եռակողմանի յարաբերութիւնները. ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ մենք միացած ենք Ամերիկայի»: Այսպիսով, ան իսլամութիւնը անուղղակիօրէն նկատած է ահաբեկչութեան աղբիւր, եւ իսլամները՝ ահաբեկչութեան գլխաւոր տարրերը: Ռազմական բնադաւառի մէջ Իսրայել-հնդկական առեւտրը հասած է երկու միլիարտ տոլարի, եւ այս այցելութեամբ իր լրումին հասած է մէկ միլիարտ տոլարի նորագոյն համաձայնագիր մը, որուն հիմամբ Հնդկաստան Իսրայելին դնեց «Ֆալքըն» ռատարային զրուցութիւնը, որ Հնդկաստանի կարելիութիւն պիտի ընծայէ Փաքիստանի ամրոցը օդային սահմանները «աչքի տակ» ունենալու: Սակայն հարցումը հետեւեալն է՝ արդեօք ասիական գուտ առեւտրական նպատակներ հետապնդող համաձայնագիր է, թէ ոչ կը միտի եռակողմանի դաշնակցութիւնը ամրապնդող տնտեսական պայմաններ ստեղծելու: Եթէ մօտէն հետեւինք Իսրայել-հնդկական յարաբերութիւններուն, պիտի տեսնենք թէ քաղաքական եւ ռազմական շահերը այս կապերուն հիմքը կը հանդիսանան:

Այս իմաստով Իսրայել շատ բան ունի շահելու հարազատական օգուտներէն: Միւս կողմէ

Հնդկաստան կ'ուզէ նաեւ այս համաձայնութեամբ ամրացնել Միացեալ Նահանգներու հետ իր կապերը, տրուած ըլլալով որ ան նախապէս մաս կը կազմէր Խորհրդային Միութեան դաշնակից երկիրներուն: Իսրայել իր կարգին այսպիսով կը ծրարէ վերջնական արար-իսրայելեան համաձայնութեան մը կարելիութիւններուն:

Վերջերս Իսրայել Միացեալ Նահանգներէն խնդրեց երկար հասողութիւն ունեցող հարկը «էֆ. 16» օդանաւեր: Քոնկրէտը անմիջապէս համաձայնեցաւ հակառակ այն իրողութեան, որ Իսրայել շարքէն ունի ռազմական օդանաւեր, որոնցմով կրնայ հասնիլ քաղաքական որեւէ մարտաքաղաք: Նման օդանաւեր ձեռք ձգելու ետին դաժնուող նպատակը պարզ է՝ հարկ եղած ատեն Իսրայելեան օդակայանէ մէջ կարողանալու ձեռք բերելու հասողութեան ծիրը կը հասնի արեւելեան եւրոպա (եւ բնականաբար կ'ընդգրկէ Իսրայելը): Միաժամանակ, այս ռազմական օդանաւերը քարկոյտ օժտուելու համար իրենց վերադարձին ընթացքին կրնան նաեւ ուղղուել ամէնէն մօտ բարեկամ երկիրը՝ Հնդկաստան:

Հնդկաստան, իր ստացած ռազմական արհեստագիտութեան փոխաբէն, իր ռազմական կեդրոններն ու օդակայանները պիտի բանայ Իսրայելեան օդանաւերու դիմաց: Արդարեւ, հիմա որ Ուաշինկթըն գրաւած է Իրաքը, ան կ'ուզէ Իսրայելի միջոցով վերջ տալ աթոմական ռումբ պատրաստելու Իրանի ծրագիրներուն, որպէսզի ինք ծանր քննադատութեան չենթարկուի իր դաշնակիցներէն: Միջին Արեւելքը մեծ վտանգի մէջ է: Սակայն պէտք չէ մոռնալ, որ Իրանի հակադարձութիւնը տարբեր պիտի ըլլայ Իրաքի մօտեցումէն: Իսրայելի կողմէ, աւելուած որեւէ անհետատեսքայ կրնայ ամրոցը տարածաշրջանը պատերազմի առաջնորդել եւ նոյնիսկ ամրոցը աշխարհը ընդգրկել այլ պատերազմի մէջ:

LIBRAIRIE JABBOUR FRÈRES

الدورة-شارع مار مارون-1-211976
بيع جملة وتفريق

Articles d'architecture et de dessin
Papeterie
Livres scolaires
Sacs scolaires
Cils tampons
Articles de bureau
Photo copie

Dora Rue St. Maroun tel: 01-267976

ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՐԱԾ ԲԱՅՑ ՉՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԸ ՎՆԱՄՆԵՐԸ

Վերջերս «Տը Օպըրվըր» թերթը յայտարարեց Իրաքի մէջ Միացեալ Նահանգներու տուած մարդկային գոհներուն իսկական պատկերը, ըստ որուն, պատերազմին սկիզբէն ի վեր վեց հազար ամերիկացի զինուորներ տուել զրկուած են առողջական պատճառներով, ներառեալ՝ ծանրօրէն վիրաւորուած 1500 զինուորներ: Այս թիւը պիտի ցնցէ շատ մը ամերիկացիներ, որոնք կը հաւատան, թէ Միացեալ Նահանգներ շատ թեթեւ վնասներ կրած են Իրաքի մէջ: Վերջին վիճակագրութիւնները նաեւ ցոյց կու տան, որ Իրաքի մէջ Պուշի վարչամեքենային վարած քաղաքականութեան նկատմամբ հանրային կարծիքին նեցուկը կը նուազի:

Չոհերուն նկատուելի թիւը նաեւ ճշդում պիտի բանեցընէ Պուշին վրայ, որ զրաւեալ Իրաքին բեռը բաժնէ ուրիշ երկիրներու հետ: Դէպի Իրաք մարդու թեղումը հասցնել նպատակադրող միջազգային դաշնութիւն մը կազմելու փորձ մը ձախողեցաւ Շարաթ, 13 Սեպտեմբերին, երբ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըրը կոչու ձեռով մերժեց Ֆրանսական առաջարկ մը՝ զայն «բոլորովին անիրապաշտ» որակելով:

Սեպտեմբերի առաջին շաբաթը երեք ամերիկացի զինուորներ սպանուեցան՝ 1 Մայիսին Իրաքի մէջ պատերազմի վերջնական աւարտը յայտարարուելէն ի վեր բախումներու ընթացքին սպանուած զինուորներուն թիւը հասցնելով 68ի: Նոյնքան այ սպանուած են արկածներու ընթացքին: Ռազմական ոստիկանութեան քաղաքականութիւնն է, որ զինուորի մը վիրաւորուած ըլլալը յայտարարուի միայն այն ատեն, երբ գոհ արձանագրուի դէպքին ընթացքին: Այդ քաղաքականութեան հակադրուած քննադատները կը վիճին, թէ այդ ձեռով մարդկային գոհներուն ճիշդ պատկերը պահուած կը մնայ: Իսկական պատկերը ցոյց կու տայ, որ 1178 ամերիկացի զինուորներ վիրաւորուած են պատերազմական գործողութիւններու ընթացքին՝ 20 Մարտին պատերազմին սկիզբէն ի վեր: Կ'ըսուի, թէ Իրաքէն տունը զրկուած ամերիկացի վիրաւորներուն մեծ մասը ծանր վիճակի մէջ է: Ամերիկեան բանակին օգտագործած արդիական զրահները կարելի կը դարձնեն մահացու վէրքերէ խուսափելը, սակայն թեւերն ու սրունքները խոցելի կը մնան: Ասիական հաշմանդամներուն տոկոսը կ'աւելցնէ վիրաւորներուն մէջ:

Կան նաեւ մահազոհութիւններ Իրաքի մէջ ծառայած զինուորներուն ապրած հոգեբանական ցնցումներուն հետեւեալներուն զո՞՞ով: Լոնոնի Ազգային բանակի թանգարանին մասնաճիւղներուն համաձայն, առաջին եւ երկրորդ աշխարհամարտերուն մասնակցած զինուորներուն մասին ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, որ անոնց հոգեբանական մեծագոյն հարցերը կու դան երկար ատեն պատերազմական միջոցառումի մէջ մնալէն: Ամերիկեան բանակի կարգ մը ընկերները աւելի քան վեց ամիսներէ ի վեր ճակատի վրայ կը գտնուին: Թանգարանի մասնաճիւղներէն Անտրու Ռոպըրթօ

նչեց, թէ ընդհանրապէս պատերազմներու աւարտէն ետք եւս գոհեր կ'արձանագրուին: «1920ականներուն իսկ Ա. Աշխարհամարտէն վիրաւորներ կը մահանային», նշեց ան:

Բրիտանացի ջոկատներուն կեդրոնները աւելի յաճախ կը փոխուէին, քան՝ ամերիկացի զինուորներուն: Պաշտպանութեան նախարարութիւնը վերջերս խորհրդակցեցաւ Ազգային բանակի թանգարանին պատասխանատուներուն հետ, ինչ կը վերաբերի նախկին պատերազմներուն մասնակցողներուն տառապած հոգեբանական հարցերուն, այդպիսով խուսափելու համար ներկայիս ծառայողը կարգ մը խնդիրներէ:

Ամերիկացի վիրաւորներուն տունը վերադարձը կ'ըլլայ այնչափ քանակաւ վիրաւորներ փոխադրող հսկայ «Մի-17» օդանաւեր կ'ընեն Ուաշինկթընի մօտ գտնուող «Անտրուզ» օդուժի խաբլիսիւր: Պատերազմի վիրաւորները նախնական բուժման կ'ենթարկուին Իրաքի մէջ ամերիկեան բանակին հաստատած դաշտային հիւանդանոցին մէջ եւ ապա կ'ուղարկուին Գերմանիոյ «Լանտսթուլ» շրջանային բժշկական կեդրոն, ուր կը կայունացուի անոնց վիճակը:

«Անտրուզ» տունը վերադարձի առաջին քայլն է: Օդանաւը՝ ամէն գիշեր վիրաւորներ փոխադրող հսկայ «Մի-17» օդանաւեր կ'ընեն Ուաշինկթընի մօտ գտնուող «Ուոլթեր Ռիս» բանակի բժշկական կեդրոնը կամ Ազգային ծովուժի բժշկական կեդրոնը (Պեթետտա-Ուաշինկթըն): Հիւանդանոցները միշտ խնդրուած են. երբեմն «Ուոլթեր Ռիս» վերականգնանցման բաժինի 40 անկողիններն այլ դրաւուած կ'ըլլան:

Անդամահատուները կամ մնացու մնասուածքներ կրողներուն մօտ ծագած հարցերը սովորական դարձած են: Ականները, ինքնաչէն ուղեւորներն ու նոսակները իրաքցի կուուղներուն նախաօրած գէնքերն են. անոնք կը պատճառեն այնպիսի վնասներ, որոնք անհրաժեշտ կը դարձնեն անդամահատութիւնները:

Աւելի նուազ վտանգուած վիրաւորները օդուժի խաբլիսի կը մնան մէկ գիշեր՝ օգտուելով կեդրոնի մարգարական եւ բժշկական կարիքներին: Շատերը իրենց տարագնեցնելու քայլն ոչինչ ունին, հետեւաբար «Ամերիկայի պատերազմական հերոսներ» կոչուած կամավորներու խումբը անոնց կը տրամադրէ հազուստ, ուստեստեղէն եւ անհրաժեշտ գոյքեր: «Այդ մէկը ընելով՝ մենք անոնց կ'ընենք, թէ մենք ձեզ չենք մոռցած», նշեց խումբի պատասխանատու Սուզան Պրիւրը:

ճԵՅՍԵՆ ՊԵՐՔԻ ԵՒ ՓՕԼ ՀԱՐԻՍ
«Տը Օպըրվըր»

ՀԱՄԱԶԱՅՐ ԳԱՅԻՆ
L'Armenian Cultural and Educational Society
HAMA ZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

ԱՐԱՄ ԽԱՀԱՇԱԾՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿ
ARAM KHATCHADOURIAN 100th ANNIVERSARY

Under The Patronage of H.E.
MR. GHAZZI AL ARIDI, Minister of Culture

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ
Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամպլ

Գեղարուեստական 'Լեկալար'
Մ'ոփսէս Խորենացիի Անուան Շփանշանակիր
ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱՊԵԱՆ

THURSDAY 2 OCTOBER
SATURDAY 4 OCTOBER
2003
AT 8:30 PM IN UNESCO PALACE

Tickets on Sale: Virgin BoxOffice
Down Town BHV Inah
Hamazkayin Library
Discotheque Geka
Studio Watche
Library Obelix Antelias

State Dance Troupe of Armenia
Artistic Director - Honoured Artist of Armenia
NORAYR MEHRABIAN

Cigaronne

ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ

ԱՌՈՂՋ ԾԵՐՈՒԹԻՒՆ ԱՊՐԵԼՈՒ ՆԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՐԵԼԱԲՈՒԹԻ



Զամաթո Հոնկո այս օրերուս երկու օր կը ըմանայ, ապա երկու օր արթուն կը մնայ:

Աշխարհի ամենէն տարեց անձը՝ ճափոնցի Բամաթո Հոնկոն, Սեպտեմբեր 16ին տօնած է իր 116րդ տարեդարձը:

Հոնկո, որ կ'ապրի Հարաւային Ճափոնի Թոքոնոնոյի կղզիին վրայ, բացառիկ իր տարեդարձին առիթով տեղի ունեցած տօնախմբութիւններուն գրեթէ ամբողջ ընթացքին քննարկ է:

Անոր ընտանիքին համաձայն, տիկին Հոնկո այս օրերուս ընդհանրապէս իր ժամանակը քննարկով կ'անցընէ, թէ եւ տակաւին կը շարունակէ ծանօթ եղանակ մը մրթմրթայ:

Թոքոնոնոյի կղզին ծննդավայրէ եղած է նաեւ նախ տղամարդուն, որ ապրած է մինչեւ 120 տարեկան, ինչ որ ցարդ արձանագրուած ամենէն մեծ տարիքն է:

Ճափոն հարուստ է տարեցներով. հոն կ'ապրի 100 տարեկանէն վեր աւելի քան 20 հազար մարդ:

Ճափոնցիներու արտասովոր երկարակեցութեան պատճառները կրնան ծովու անասուններով հարուստ եւ իւրերով ազդատ սննդականոն մը ըլլալ կամ՝ Ճափոնի ընկերային ծառայութեան ուժեղ դրուածքները եւ ընտանեկան կարգը:

կան զօրակցութեան ցանցերը:

Ճափոն ներկայիս դարձած է ծերացող ընկերութիւն մը, ուր աշխատող ձեռքերը կը նուազին: Ստանդարտը կը նուազին: Ստանդարտը կը նուազին: Ստանդարտը կը նուազին:

Այսուհանդերձ, տարեցներու բժշկութեան մասնագէտի մը համաձայն, այլ երկիրներու մէջ նաեւ ներկայիս աւելի մեծ թիւով մարդիկ ծերանալով հանդերձ առողջ կը մնան եւ հաւանական է, որ այս ընթացքը շարունակուի:

Բրիտանիոյ Մանչեսթըրը համալսարանին մասնագէտներէն Ռէյմընտ Թելիս այս ամսուան սկիզբը յայտնած է, թէ տարեցներու մեծամասնութեան համար «կեանքը այսքան լաւ է եղած եւ կրնայ նոյնիսկ բարելաւուիլ»:

ԿԵՆՔԻ ՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ԱՎԿԱՆՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՆՈՒՄԱՆԱՅ

Ըստ Թելիսի, ծնունդին կեանքի տեւողութեան ակնկալութիւնը անցնող երկու տասնամեակներուն 4,7 տարեկան ան արձանագրած է տղայ մարդոց եւ 3,5 տարեկան

անձ կ'ինքնու պարագային, եւ ծերութեան հասկացողութիւնը, իբրեւ ընկերութեան բեռ, իրականութեանէն շատ տարբեր է:

Մասնագէտը կը յայտնէ, որ տարեցներէն շատեր լաւ առողջութիւն կը վայելեն, ինչպէս նաեւ ապրելաձեւ մը, որ քանի մը տասնամեակներ առաջ աներեւակայի պիտի ըլլար:

Փաստերը ցոյց կու տան, որ անոնց դիմազորաւած անկարողութեան համեմատութիւնը կը նուազի, մինչ այդ նուազումին համեմատութիւնը ան կ'արձանագրէ, ըսած է ան գիտական խորհրդատուի մը ընթացքին:

Դասախօսը շեշտած է սակայն, որ աւելին կարելի է ընել յետաձգելու համար քրոնիք, անկար դարձնող հիւանդութիւնները:

«Ծերացած մարմին մը այն մարմինն է, որ չի կրնար սոկալ հիւանդութիւններու, հետեւաբար, թե՛ անկար դարձնող քրոնիք հիւանդութիւնները յետաձգուի, կարելի պիտի ըլլայ աւելի երկար ապրիլ եւ աւելի կարճատեւ ժամանակի ընթացքին մահանալ», ըսած է ան:

Հետեւաբար փոխանակ կեանքին վերջին 8 կամ աւելի տարիները վատառողջութենէ տառապելու, բժշկական մարզի մասնագէտներ կը յուսան հիւանդութեան տեւողութիւնը մեծ համեմատութեամբ կրճատել:

Ապրելաձեւի պարզ միջոցառումներ, ինչպէս՝ յաւելեալ մարզանք, նուազ գիրութիւն, չծխել, առողջ սննդականոն մը եւ չափաւոր ձեւով միայն խմել, կրնայ նուազեցնել տարիքի կապուած հիւանդութիւնները, ինչպէս՝ քաղցկեղ, կաթնած, սրտի հիւանդութիւն, ոսկրափտութիւն:

Թելիսի համաձայն, բժիշկները նաեւ աւելին կրնան ընել կաթնած կամ տարիքի կապուած այլ հիւանդութիւններ ունենալու հաւանականութիւնը նուազեցնելու համար:

Սակայն արեան զերծընչումէ տառապող եւ կաթնածի վտանգ դիմազորաւոր մարդոց 50 առ հարիւրը չի նկատուի, նկատուողներուն կէսը դարձմանում չի ստանար եւ դարձմանողներուն կէսը անհրաժեշտ ձեւով չի դարձմանուի, կը յայտնէ դասախօսը:

Մարդիկ տակաւին պիտի ծերանան եւ ի վերջոյ պիտի մահանան, սակայն անկարողութեան սկսման եւ մահուան միջեւ ժամանակամիջոցը պիտի կրճատուի, կը նախատեսէ ան:

ՆՈՐԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԵՎՈՒՆ ԸԱՍԱԶԱՅՆ

ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆ ՄԷԿ ՄԱՍՆԻԿԸ ԿԵԱՆՔԸ Կ'ԵՐԿԱՐԱԶՉԳԷ

Հետազոտողներ տարիներէ ի վեր գիտեն, որ ջերմութիւնը նուազեցումը թթխմորէն մինչեւ ստանաւորներու կեանքը կրնայ երկարաձգել: Սակայն աւելի երկարատեւ ապրելու աւելի դիւրին ձեւ մը կրայ խցան մը բանալու չափ պարզ ըլլալ:

Օգոստոսին կը հաղորդուէր, թէ հետազոտողներ առաջին անգամ ըլլալով ցոյց տուած են, թէ կարմիր գինիի, գետնապիստակի եւ բուսական աշխարհի այլ նիւթերու մէջ գտնուող մոլեքիւններ «կը կապեն» ջերմութիւնը նուազեցման կեանքը երկարաձգող ազդեցութիւնները:

Այս յայտնաբերումը կրնայ օժանդակել հետազոտողներուն, որ մշակեն դեղեր, որոնք կեանքը կ'երկարաձգեն եւ կը կանխարգիւնեն կամ կը դարմանեն ծերանալու կապուած հիւանդութիւնները:

Հետազոտողները գտած են, թէ մոլեքիւններէն մէկը՝ ռեսվերատրոլ, թթխմորի բլիթներուն կեանքը մինչեւ 80 առ հարիւրով կ'երկարաձգէ: Անիկա բնականաբար կը գտնուի խաղողներու եւ կարմիր գինիի մէջ:

Հարվերտ համալսարանին բժշկագիտական բաժանմունքին դասախօսներէն Տէյվիտ Սինքլէր, որ հետազոտութեանը մասնակցած է, կ'ըսէ, թէ ինք եւ իր գործակիցները կը յուսան, որ պիտի կարենան փաստել, թէ մոլեքիւնները ո՛չ միայն թթխմորի բլիթներուն կեանքը կ'երկարաձգեն, այլ նաեւ՝ բազմաբլիթային էակներու, ինչպէս՝ որդերու, միջատներու եւ թերեւս մարդոց:

ԱՐԲԱՆԵԱԿՆԵՐ Կ'ՕԺԱՆԳԱԿԵՆ ՈՐԹԱՏՈՒՆԿԻ ՄՇԱԿՈՒՄՈՎ ԶԲԱՂՈՂ ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐՈՒ

Երուպական անջրպետագնացութեան գործակալութեան (ԷՍԱ) արբանեակներ կ'օգնեն որբատուները մշակող երկրագործներու, որ լաւագոյն գիճիները արտադրեն:

Արբանեակները կ'օգտագործուին որբատուներու կողմէն որբատուներու փոխանցելու համար, ինչ որ կրնայ կենսական տեղեկութիւններ հայտնաբերել խաղող անող շրջանի մը երկրաբանութեան մասին:

ԷՍԱ-յի մասնագէտներէն Լուիսի Ֆուսթո կ'ըսէ, թէ հողաշերտերու տարբեր բաժիններու ուսումնասիրութիւնը պիտի օգնէ գտնելու, թէ արդեօք կ'ա՞ն «մասնագիտական» վայրեր, ուր խաղողի տեսակները կ'արտադրուին:

Ինչ որ ինքնու պարագային, եւ ծերութեան հասկացողութիւնը, իբրեւ ընկերութեան բեռ, իրականութեանէն շատ տարբեր է:



Արբանեակային պատկերներ աւելի մանրամասն տեղեկութիւններ կը հայտնաբերեն որբատուները կայգիներու մասին:

Կ'առաջադրուի Երուպայի մէջ որբատուները կայգիները անհախընթաց մանրամասնութիւններով «քարտէսի մը» վրայ գտնելու՝ տեղեկութիւններ հայտնաբերելու համար:

Ֆուսթո կը յայտնէ, որ մասնագէտները երկրագործներուն չեն առաջարկեր, որ հրաժարին անհաղակ միջոցներէ: «Գինիի շուկան որակ կը փնտռէ եւ ո՛չ միայն քանակ, իսկ որակի կարելի է հասնիլ տարբեր բազմաթիւ միջոցներով», կ'ըսէ ան:

Արբանեակները կրնան օգտագործուիլ անուամի ընթացքին որբերու գոյնի ու ձեւի հսկելու համար: Նկարները կրնան օժանդակել երկրագործներուն, որ որոշեն, թէ խաղողը քաղելու լաւագոյն ժամանակը ե՞րբ է:

Անոնք կրնան օգնել նաեւ երկրագործներուն հասկնալու, թէ շրջանին հողը եւ երկրաբանութիւնը եւ նոյնիսկ քերտումը ի՞նչպէս կրնան ազդել խաղողի համին վրայ:

Ֆուսթո, որ կ'աշխատի Իտալիոյ Ֆրասքաթի որբատուներու կայգիներու շրջանին մէջ, կը բացատրէ, թէ դրուելու ի՞նչպէս կարելի է գործածել: Ան կ'ըսէ, թէ Ֆրասքաթի գինիի խաղողները կ'անցնեն հրաբխային շրջանի մը մէջ եւ հրաբխային շրջաններուն մէջ կան բազմաթիւ հրաբխութիւններ, որոնք անցեալին շուրջը լեցուած էին:

«Այդ շուրջը տրամադրելի էր հոտմեակային ժամանակներուն եւ տակաւին տրամադրելի է 50 մեթր վար», կը յայտնէ ան:

«Երբ վերեւ կը դիտէք, կը տեսնէք, որ հրաբխութիւնները աւելի խոնավ են, բայց շրջանին մեջ կան հրաբխային շրջաններուն մէջ կան բազմաթիւ հրաբխութիւններ, որոնք անցեալին շուրջը լեցուած էին:

«Այդ շուրջը տրամադրելի էր հոտմեակային ժամանակներուն եւ տակաւին տրամադրելի է 50 մեթր վար», կը յայտնէ ան: «Երբ վերեւ կը դիտէք, կը տեսնէք, որ հրաբխութիւնները աւելի խոնավ են, բայց շրջանին մէջ կան հրաբխային շրջաններուն մէջ կան բազմաթիւ հրաբխութիւններ, որոնք անցեալին շուրջը լեցուած էին: Պարիս ծրագիրը գորակցութիւնը կը վայելէ եւրոպական Յանձնաժողովին, եւ անոր ծիրէն ներս կը գործակցի Երուպայի մէջ 14 ընկերութիւններու, հետագային հիմնարկներ եւ խաղող մշակող երկրագործներու կազմակերպութիւններ:



Փոլիֆենոլները կ'արտադրուին բազմաթիւ բոյսերու կողմէ. քերես ամեն լաւ ծանօթը ռեսվերատրոլն է, որ կարմիր գինիին մէջ կը գտնուի:

Արդէն որդերու եւ «տրոպիկ» ճաններու վրայ փորձարկումները «բազմաթիւ» արդիւնքներ տուած են, եւ նման փորձարկումներ կը ծրագրուին մուկերու համար, ըսած է ան Օգոստոսի վերջերս:

ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆ ԱՌՆՈՒԹԵԱՄԸ ԽԱՆԳԱԿԱՆ

Սինքլէր յայտնած է, թէ իր հետազոտութիւններուն սկսելէ ի վեր աւելի «խանդավառ» դարձած է կարմիր գինիին առողջութեան վրայ օգտակարութեան մասին, եւ թէ մասնագէտներ, որոնք իր յայտնաբերումները ուսումնասիրած են, նման հակադարձութիւն ցուցաբերած են:

«Տակաւին շատ մարդիկ չեն գիտեր ատոր մասին, սակայն անոնք, որոնք գիտեն, գրեթէ բոլորը իրենց խմելու սովորութիւնը փոխած են, այսինքն աւելի կարմիր գինի կը խմեն», ըսած է ան օրին:

Այն մոլեքիւնները, որոնք փաստուած են, թէ թթխմորի բլիթներուն կեանքը կ'երկարաձգեն, կը պատկանին նիւթերու փոլիֆենոլ կոչուած ընտանիքին: Անոր մաս կը կազմէ ռեսվերատրոլը, որուն գծով արդէն կ'ենթադրուի, թէ կարմիր գինիին առողջ կը դարձնէր, երբ չափաւոր համեմատութեամբ խմուի:

Սինքլէր կ'ըսէ, որ նորագոյն ուսումնասիրութիւնը կրնայ օգնել բացատրելու, թէ ինչո՞ւ կարմիր գինիի չափաւոր սպառումը կապուած է սրտի հիւանդութեան նուազ հաւանականութեան, եւ ինչո՞ւ ռեսվերատրոլը մուկերու մէջ քաղցկեղ կը կանխարգիւնէ:

«Այս ուսումնասիրութեան մէջ բազմաթիւ կէտեր իրարու կը միացնենք», կը յայտնէ ան:

Գիտնականներ տասնամեակներէ ի վեր գիտեն, թէ էակներ սահմանափակ ջերմութեւ պարունակող սննդականոնի ենթարկելը մեծ համեմատութեամբ կը նուազեցնէ տարիքի կապուած հիւանդութիւններ, ինչպէս՝ քաղցկեղ, ոսկրափտում եւ սրտի հիւանդութիւն:

1990ական թուականներուն ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ մէկ ծին միայն կրնայ հակակշռել էակներու ծերացումը արագութիւնը: Այս պատճառով գիտնականներ աշխատանքի լծուած էին այդ ծինները օգտագործելու միջոցներ գտնելու համար:

Սինքլէր եւ անոր խմբակը փնտռած են մոլեքիւններ, որոնք գործած կը դարձնեն անզիմներ, որոնք իրենց կարգին կ'ազդեն ծերանալու «կանոնաւորող» ծիններուն վրայ:

Այժմ անոնք կ'ըսեն, թէ գտած են այդ մոլեքիւնները:

Մասնագէտները ո՛չ միայն նման 18 մոլեքիւններու խմբակ մը գտած են, անոնք նաեւ գտած են, թէ բոլորը բոյսերէ կու գան եւ կ'արտադրուին իբրեւ հակադարձութիւն շրջապատի ծանր պայմաններու, ինչպէս՝ երաշտի:

«Կը կարծենք, որ գիտենք, թէ ինչո՞ւ այս բոյսերը այդ մոլեքիւնները կ'արտադրեն: Կը կարծենք, թէ անոնք իենց պաշտպանութեան սեփական հակադարձութեան մաս կը կազմեն, եւ կ'ենթադրենք նաեւ, որ սնկային բոյսերն ու անասունները, որոնք բոյսերով կը սնանին, կրնան օգտուիլ անոնցմէ», կը յայտնէ Սինքլէր:

Այս տեսութիւնը յստակացնելու համար ան կը նշէ, որ աճուածի աւելի դժուար պայմաններ ունեցող շրջաններէ (Սպանիա, Չիլի, Արժանթին, Աւստրալիա) կարմիր գինիները աւելի ռեսվերատրոլ կը պարունակեն, քան անոնք, որոնք կ'արտադրուին խաղողներէ, որոնք ծանր ճնշումներու կամ երաշտի հարց չեն գիմազարաւած:

Բնականաբար տակաւին շատ կանխահաս է զերակացնելու համար, թէ հետազոտողները յայտնաբերած են մարդկային կեանքի «ազնիւ խմիչքը»: Յաւելեալ աշխատանքներ անհրաժեշտ են եւ առաջին քայլը դրան է, թէ արդեօք ռեսվերատրոլը կրնայ մուկերու կեանքը երկարել:

Այդ փորձարկումը պիտի սկսի քանի մը ամիսէն եւ հաւանաբար արդիւնքներու պիտի յանգի նուազ քան տարիէ մը:

Եթէ փոլիֆենոլները մուկերուն կեանքը կ'երկարեն, եւ թէ յաւելեալ այդ կեանքը առողջ է, ապա բեմը պատրաստ պիտի ըլլայ մարդկային փորձարկումներու, ըսինքն մը, որուն մասին գիտնականները դարերէ ի վեր կ'երազեն. դեղահատ մը կամ յատուկ հեղուկ մը, որ մեր կեանքը կ'երկարէ:

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱԺԵԱՆ (Աղբիւրներ՝ «Պի. Պի. Սի.», «ՈՌՅՈՐԸ», «ՆԻՒ ՍԱՅՆԹԵՍԻՍ»)

Հ. Կ. Բ. Մ. Ի ԲԺՇԿԱԿԱՆ - ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

ՇԱՔԱՐԻ ԱՆՎՃԱՐ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Գործակցութեամբ Novo-Nordisk ընկերութեան, Հ. Կ. Բ. Մ. Ի Բժշկական - Ընկերային Ծառայութեան կեդրոնը իր Նոր Բաճոյ դարմանատան մէջ կազմակերպած է շաքարայտաւորներու վիճակի անվճար ստուգման օր մը Երեւանի 23 Սեպտեմբեր 2003, կէսօրէ առաջ ժամը 8:30էն 13:00 եւ կէսօրէ ետք ժամը 15:00էն 17:00: Առիթն կրնան օգտուիլ բոլոր անոնք, որոնք կը փափաքին:

Ստուգումը պիտի կատարուի մասնագէտ բժիշկի հսկողութեան տակ եւ շաքարի քննութեան Free Style վաճառատան (99,6% ձգարտաւորմանը) մոնիթորինգը գործիքը Բրիտանիայի պիտի ստանան այն շաքարայտաւորները, որոնք ունին մնաց գործիք մը ընճեցում անհրաժեշտութիւնը հաստատող դեղագիր՝ մասնագէտ բժիշկէ մը:

معهد بيلوس للتعليم المهني والتقني نتائج الإمتحانات الرسمية 2002 - 2003	
100% المرتبة الخامسة في لبنان	BT التربية الحضانة
100% المرتبة السابعة في لبنان	BT البيع والعلاقات التجارية
90% المرتبة الخامسة في لبنان	BT المحاسبة والمعلوماتية
75% المرتبة السادسة في لبنان	BT الالكترونيك
100% المرتبة الخامسة في لبنان	BT ميكانيك السيارات
80% المرتبة الخامسة في لبنان	TS الالكترونيك
100% المرتبة الثانية في لبنان	TS المراجعة والخبرة
90% المرتبة الخامسة في لبنان	TS المعلوماتية الإدارية

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ. ԿԱՆԱՅԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՆԵՐՆ

ՎԵՐԱՍՈՒՏ

Համազգայինի «Բ. Կանայեան» Երաժշտական Քոնյեթի 2003-2004 տարեշրջանի արձանագրությունները կը սկսին 15 Սեպտեմբերին եւ կը շարունակուին ամէն օր բացի Շաբաթ օրերէն, կէսօրէ ետք ժամը 3:00էն 7:00: Վերամուտ՝ 13 Հոկտեմբեր:

ՍԱՍՕԹ.- Յաւելեայ մանրամասնութեան համար դիմել երաժշտանոցի քարտուղարութեան. հեռ. 01-265899 եւ 01-249375:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5547
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|---|---|
| ՎՈՐԻՉՈՆԱԿԱՆ
1. Գանձապահ - Եկամուտ:
2. Արմէն Շիտանեանի երկերէն:
3. Ձեռնառումը - Գազաթ:
4. Կիլիկեան քաղաք (Հակ.) - Ջորաւոր:
5. Կանացի կոշակեան բառ - Հայկական ամիսներու ժէ. օրը:
6. Արական օտար անուն - Հիբանանի գետերէն:
7. Պտղատեսակ - Խեցի:
8. Անարդար - Պարտիզ-պանի գործիք:
9. Ուրուր - Համեմատութիւն:
10. Կլոր բուրգ - Յոյժ, չափազանց:
11. Ամասնուն մը - Պարտեսակ: | ՈՒՂԱՆԱՅԵԱՆ
1. Տկարամիտ, կարճամիտ:
2. Դոնաւար - Իգական օտար անուն:
3. Ափրիկեան երկիր - Նիւար:
4. Փրկարար - Արական օտար անուն:
5. Նուազ - Նիճերիոյ քաղաքներէն:
6. Աղամանը - Գոյնգոյն:
7. Գէմ, հակառակ:
8. Լեռնաշղթայ - Դիմացի:
9. Հետիոտն քաղաք - Վրան երկաթ ձեռնուր պողպատեայ կազմած:
10. Ընդունակ - Նկարչական կարմիր ներկ - Այրուրներէն:
11. Օտար տիտղոս - Ճականակ: |
|---|---|

ԹԻՒ 5546
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ

1	Ս	Պ	Ա	Ռ	Պ	Պ	Ի	Ռ	Ս
2	Ս	Ա	Ն	Ս	Ս	Ս	Ս	Ի	Ս
3	Ո	Ր	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ի	Ս
4	Ի	Ր	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Կ	Դ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

DAY WATER
 Recommended for Babies
 Clean & Safe Water Under Hygienic Condition
 Approved By Rain Water
 Free Delivery 19 Litre @ 2000L.L.
 Mr. Jim Manouk, Keushkerian owner
 DAY WATER, Tel.: 03/435298

ՎԵՐԱՍՈՒՏ
ՔԱՐԿԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ
 Պուրճ-Համուտ հեռ. քիւր: 260533 - 260534 - 266822

- 2003-2004 տարեշրջանի արձանագրությունները նախկին եւ նորից աշակերտներու համար սկսած են եւ կը շարունակուին հաստատութեան գրասենեակին մէջ:
- Նորից աշակերտներ, որոնք սովորական վարձարաններու մէջ կարող չեն իրենց դասերուն հետ բալլ պահել, եւ սորվելու տկարութիւն եւ կամ դժուարութիւն կ'ունենան, կրճան արձանագրութեան դիմում կատարել եւ ընդունուիլ, յետ հոգեբանական եւ մանկավարձական քննութիւններու, որոնք ձրիաբար կը կատարուին հաստատութեան մէջ:
- Հայ վարձարաններու աշակերտներ որոնք լեզուական, հոգեկան, մտային եւ ուսումնական օգնութիւններ կ'ապահովուին, կ'որոշուին անոնց անհատական անհատական կրճան հանդիսով ՔԱՐԿԻ, օրպէսզի յարձար ու մասնագիտացան լուծում մը տրուի իրենց հարցերուն:
- Օրօքարի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններու համար:
- Վերամուտ: Դասաւանդութիւնները կը սկսին Հինգշաբթի 2 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 8:00ին:

ՔԱՐԿԻ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

www.hamazkayin.com

★ ԻՆՆՆ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ ★

- ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ)**
 Ձերմ ու քաղցր նայուածք մը կը բաւէ, որ սիրով կ'ապուիք անձի մը: Բայց այսպիսի հարցեր արագօրէն գործնական ձեւ չեն ստանար: Համբերեցէք:
- ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**
 Կարօտը պաշարած է ձեզ այսօր, մանաւանդ անցեալի յուշերուն ջերմօրէն կ'ապուած էք: Կեանքը երբեմն երազ կը բուրի եւ կը գեղեցկացայ ազուտոր յիշատակներով: Ձեր տրամադրութիւնը բարձր պիտի ըլլայ:
- ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**
 Ձեր գաւակները կը վիճին անդադար, եւ դուք չէք գիտեր ինչ ընել խաղաղութիւն հաստատելու համար ձեր տան մէջ: Հարկ է ներողամիտ տրամադրութիւն ունենալ անոնց նկատմամբ:
- ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**
 Արդէն ձեզի ըսած են, թէ զգացումները չեն գնուիր, անոնք ծախու ապրանք չեն: ԲՆճեցէք ձեր բնաւորութեան գիծերը, ու եթէ սխալներ կը նկատէք, սրբազնեցէք:
- ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**
 Ասկէ անկէ խօսքեր պիտի լսէք, բամբասանք եւ անհիմաստ լուրեր պիտի շրջին ձեր շուրջը: Ո՛վ է գոհը... Եթէ դուք էք, կարեւորութիւն մի տաք, որովհետեւ անհիման են եղածները:
- ԿՈՑՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**
 Մանր մուկ հարցերու վրայ մի մտածէք: Օրը անյարմար է հիւրեր ընդունելու: Ընելիք մէկ բան ունիք. ձեր միտքը հանգստացնելու համար այցելեցէք ձեր թիշիկին, որպէսզի վերջնական կերպով համոզուիք, թէ առողջ էք:
- ԿԵՒՈՒՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**
 Մարդ տեսնել չէք ուզոյք, միջնորդ ունիք պարտաւորութիւններ եւ տեսակցութիւններ ձեր գործին վերաբերեալ: Այդ հարցերը ուրիշ օրուան չէք կրնար ձգել. ուրեմն սրափեցէք եւ գործի անցէք:
- ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**
 Միջամուխ մի ըլլաք վեճի մը, որ ստեղծուած է ձեր մէկ պաշտօնակիցի եւ տնօրէնի միջեւ: Որովհետեւ դուք տեղեակ չէք վիճարկուած խնդրին բոլոր մանրամասնութիւններուն:
- ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**
 Ձեր հարգատեմբեան մէկը պիտի ճամբորդէ, իր բացակայութեան ամբողջ գործը պիտի մնայ ձեր վրայ: Ձանցէք լաւ կատարել ձեզի վստահուած աշխատանքը:
- ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**
 Ձեր պիւտեհի կ'ապուած հարց մը պիտի կարգադրուի: Եղէք ուշադիր, որպէսզի անուշադրութեամբ սխալ մը չգործէք զրամական մարզին մէջ: Խոհեմ եղէք:
- ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար)**
 Ձեր կողակիցի կամ ձեր ընկերոջ հետ փոխմասնութիւն մը պիտի ստեղծուի: Ձանցէք ըլլալ ներողամիտ եւ բարեացակամ, որպէսզի նորը յարգանայ:
- ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**
 Այստեղ մէջ պիտի նստեցնուի կատակ մը ընդունորտ, սուտն ու իրաւը իրարու պիտի խառնուին: Պիտի չգիտնաք, թէ ինչ ձեռք պէտք է դիմել նշմարտութիւնը բացայայտելու համար:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

«ՍԷՆ ԺՈՐԺ» ՀԻՒՆԴԱՆՈՅԸ
 ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
 ՕՐԸ ԿԸ ՆՇԷ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ
 ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍՈՎ

Լիբանանի մէջ լուսանկարչական սակաւաթիւ ցուցահանդէսներ բաց են բոլորին դիմաց՝ ըլլան անոնք արհեստավարժ թէ սիրողական լուսանկարիչներ: Անոնցմէ մէկն է Պէրրոթի «Սէն Ժորժ» հիւանդանոցին կողմէ կազմակերպուած, որ կը միտի նշել 23 Սեպտեմբերի մանուկներու համաշխարհային օրը: Բարեսիրական կազմակերպութիւններու հովանաւորութիւնը վայելող այս ցուցահանդէս-մրցումը, որ կը կրէ «Սէն Ժորժ» խորագիրը, կը նպաստակալէ միաժամանակ տօնել նաեւ հիւանդանոցին հիմնադրութեան 125ամեակը:



«Աճֆան տ'իսի ու տ'այթօր» ցուցահանդէսը

Այս խումբին մաս կազմող 40 լուսանկարներու ցուցահանդէսն է, որուն բացումը տեղի կ'ունենայ այսօր, Պէրրոթի Օրթոթոքս եպիսկոպոսարանի շրջափակին մէջ:

Վիճակէն ներշնչուած պատկերներ, որոնց մէջ լուսանկարչութեան անկախ մասնագետներէ բաղկացած դատական կազմ մը կատարած է զտումի առաջին հանգրուանը:

ցահանդէսը յատուկ արցանակներ պիտի շնորհէ դատական կազմին կողմէ ընտրուած երեք մրցանակակիրներու:

Նշենք, որ «Սէն Ժորժ» խումբին «Սէն Ժորժ» հիւանդանոցին արահը:

ԱՅՍՕՐ

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ Պէրրոթի Օրթոթոքս եպիսկոպոսարանի շրջափակը, մինչեւ 30 Սեպտեմբեր:

ՕՂԵՐԵՆՈՅԸ

ԵՐԵՎԱՆԻ,

23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003

ՊԷՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵԿ՝ 30°C

ԳԻՇԵՐ՝ 23°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 56%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՋ

23 Սեպտեմբեր 1953

ՈՒՐ Ե ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ
ՈՐԵՒԷՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ

«Յառաջ»ի մէջ (16 Սեպտեմբեր) կը կարդանք:

Գահիրէի մեր պաշտօնակիցը՝ «Յուսաբեր», Սեպտեմբեր 10ի թիւին մէջ վերապահութեամբ արտատպած է Պէրրոթի հնչակեան օրկանին, «Արարատ»ի հետեւեալ տեղեկութիւնը (29 Օգոստոս).-

«27 Օգոստոս, Հինգշաբթի, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի դպրեվանքի վերատեսուչ Դերեմիկ Եպիսկոպոս խալիպի օգակայանէն օղանաւ առաւ դէպի Փարիզ: Սրբազանը քանի մը օր Փարիզ մնալէ ետք պիտի անցնի Լոնտոն, ապա Փրակայի գիծով պիտի մեկնի Մոսկուա, երեւան, Էջմիածին:

«Դերեմիկ սրբազան այս նամակը դուրսէն ձեռնարկուած է ընդառաջելով Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գեորգ Զ. հայրապետի հրաւերին, որ Էջմիածին երթալու վիզան փութեցուած է սրբազանիցն»:

Հնչակեան օրկանը դեռ ուրիշ բաներ ալ կ'ըսէ իր չնաշխարհիկ հայերէնով. «Դերեմիկ կարճ ատեն մը աստուածաբանութեան դաս պիտի տայ Էջմիածին Հոգեւոր ձեւաբանին մէջ, հաջորդ շրջանը մեքենագրութեան դասընթացքի մը վրայ, պիտի այցելէ Հնդկաստան եւ Պարսկաստան, «պիտի շանայ Ամենայն Հայոց հայրապետին հաւանութիւնը ստանալ Պոլսոյ պատրիարք Գարեգին սրբազանի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան շուրջ»: Եւ վերջապէս հաւանական կը գտնէ, որ Երուսաղէմէն երթը վարդապետներ Էջմիածին երթան Եպիսկոպոսանալու համար:



Այս լուրերու մասին հարցումներ ուղղեցինք Փարիզի հայոց եկեղեցիին, եւ պատասխանեցին, թէ լուր չունին, թէ Դերեմիկ եպս. Լոնտոնէն անցած է Պէլքիքա եւ որեւէ բան չէ ըսած իրենց՝ իր ծրագրերու մասին:

ԱՅՍՕՐ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

- 1890.- Սկիզբ Կուկուցեանի արշաւանքին:
- 1915.- Մահ Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր Յովհաննեսեան)
- 1947.- Մահ Լիպարիտ Նազարեանցի
- 1991.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
- 1992.- Սոչիի մէջ, Հայաստան եւ Ազրբայճան կը ստորագրեն զինադադարի համաձայնութիւն մը: Զինադադար չի յարգուիլ ազերիներու կողմէ:
- 1993.- Արցախի եւ Ազրբայճանի փոխ վարչապետներու՝ Ժիրայր Պողոսեանի եւ Ապպաս Ապպասովի հանդիպում՝ երկու հանրապետութիւններու սահմանին վրայ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀ



ՓՈՆԿ ՓՈՆԿ

ՏԱՐՔԵՐ

ԳԱՍԱԻՈՐՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԷՉ Հ. Մ. Ը. Մ. ԿԸ ՓԱՅԼԻ

Լիբանանի փինկ փունկի ֆետերասիոնը շաբաթակից հրապարակեց տղոց եւ աղջրկանց, ինչպէս նաեւ տարբեր դասակարգերուն ընդհանուր դասաւորումը:

Հ. Մ. Ը. Մ. ական մարզիկներ կը շարունակեն գրաւել աղջկանց, 1992-1993ի ծնունդ եւ 1986-1987ի ծնունդ տղոց ընդհանուր դասաւորման պարագլուխի առաջին երկու դիրքերը:

Ստորեւ՝ նոր դասաւորումը	ԿԵՏ
●ԱՂՋԻԿՆԵՐ	
1.- Լարա Քէլէպաշեան (Հ. Մ. Ը. Մ.)	120
2.- Լիպա Պարիքեան (Հ. Մ. Ը. Մ.)	103
3.- Գոտա Ըլէյյար	97
4.- Նոէլ Քէշիշեան (Հ. Մ. Ը. Մ.)	77
5.- Քրիսթել Ժալրի	67
6.- Ռանա Մըրշի	66
7.- Ռուպա Պրսէյպէ	64
8.- Ռիթա Պրսէյպէ	61
9.- Թալա Հատիլ	51
10.- Լիպ Հատիլ	44
24.- Դուին Մունըղլեան (Հ. Մ. Ը. Մ.)	12

●ՏՂԱՔ	ԿԵՏ
1.- Ռաշտ Պրպօ	125
2.- Մոհամէտ Հապաշ	100
3.- Ալֆրէտ Նաժըլ	86
4.- Ժոյէֆ Ծալիուպ	84
5.- Ռուպիկ Շեմեմեան (Հ. Մ. Ը. Մ.)	78
6.- Յէտի Ասսիս	68
7.- Մարուան Պրպրի	66
8.- Մոհամէտ Շարքաուի	63
9.- Ռուսմա Հրմսի	55
10.- Մալէք Թաուիլ (Հ. Մ. Ը. Մ.)	47
18.- Ժալալ Թաուիլ (Հ. Մ. Ը. Մ.)	29

●1992-1993ի ԾՆՈՒՆԴ ՏՂԱՔ	ԿԵՏ
1.- Աւո Մունըղլեան (Հ. Մ. Ը. Մ.)	64
2.- Հրակ Պետոյեան (Հ. Մ. Ը. Մ.)	44
3.- Արմէն Պաքաճեան (Հ. Մ. Ը. Մ.)	36
4.- Վարանդ Պոյաճեան (Հ. Մ. Ը. Մ.)	24

●1986-1987ի ԾՆՈՒՆԴ ՏՂԱՔ	ԿԵՏ
1.- Մալէք Թաուիլ (Հ. Մ. Ը. Մ.)	80
2.- Ժալալ Թաուիլ (Հ. Մ. Ը. Մ.)	60
3.- Մոհամէտ Պաննուր	52

ԺԻՏՕ

ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՏԻՐԱՑԱՆ ՄԵՏԱԼՆԵՐՈՒ

Թուրքիոյ մէջ տեղի ունեցած ժիտոյի միջազգային մրցաշարքին, Հայաստանի երիտասարդներու հասարակարգի մաս կազմող Հայկ Վարնանեան եւ Աշոտ Գասպարեան բուսական փայլուն արդիւնքներ արձանագրելով տիրացան արծաթ մետալներու: Հայրենի երեք այլ մարզիկներ իրենց կարգին տիրացան պրոնկ մետալներու:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ ՍԿՍԱԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐՈՒ ...

Շարունակուած Ա. Էջէն

Խորհրդածողովի ընթացքին երկար ելոյթով հանդէս եկաւ Լեոնային Ղարաբաղի վարչապետ Անուշաւան Գանիբեան: Ան ընդգծեց, որ Արցախի մէջ վերջին տարիներուն արձանագրուած է ներդրումային ուշագրաւ աշխուժութիւն: Ան տեղեկացուց, որ վերջին երեք տարուան ընթացքին Լեոնային Ղարաբաղի տնտեսութեան մէջ կատարուած է 35 միլիոն տոլարի ներդրում, որուն 25 միլիոնը՝ Սփիւռքէն, 5 միլիոնը՝ Հայաստանի գործատեղիներէն, իսկ մնացեալը՝ Արցախէն: «Ներդրումներուն մեծ մասը Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Պելճիքայի մեր հայրենակիցներէն են», նկատել տուաւ Գանիբեան, աւելցնելով, որ ներդրումներուն մեծ մասը կը ձգտի պատերազմի հետեւանքով նահանջած տնտեսութեան վերականգնման:

Խորհրդածողովի հանդիսաւոր բացումէն ետք համալիրի դահլիճներէն մէկուն մէջ տեղի ունեցաւ «Փանարմինիլըն Էքսփօ - 2003» ցուցահանդէսը:

Խորհրդածողովը իր աշխատանքները պիտի շարունակէ քննարկելով 12 ընդհանուր թեմաներ. «Տնտեսական քաղաքականութիւն», «Հարկային, մարսային քաղաքականութիւն», «Տարածքային կարգաւորում», «Ֆինանսադրամատնային համակարգ», «Պետական եւ անկախական հատուածներու համագործակցութիւն», «Չբուսաշրջութիւն», «Հանրաքաղաքականութիւն», «Թեթեւ արդիւնաբերութիւն», «Գիտութիւն եւ արհեստագիտութիւն», «Ռեկոնստրուկցիոն եւ ծաւալման գործընթաց», «Տեղեկատուական արհեստագիտութիւն եւ հեռահաղորդակցութիւն», «Գիւլտնտեսութիւն»:

ԱՂՋԿԱՆՑ ՄՈՆՏԻԱԼ

Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցող 2003ի աղջկանց Մոնտիալին, որ սկսաւ անցեալ շաբաթավերջին, ութ խումբեր յաջողեցան արձանագրել մրցաշարքի իրենց առաջին յաղթանակը:

Մրցաշարքը հիւրընկալող եւ տիրուսակիր՝ Միացեալ Նահանգներ, Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած մրցումին, 3-1 արդիւնքով պարտութեան մատնեցին Շուէտը: Քրիսթին Լիլի (27րդ), Միստի Փէրլօ (36րդ) եւ Շէնըն Պոքս (78րդ) նշանակեցին յաղթական կազմին կողմը, իսկ Վիքթորիա Սվենսոն՝ Շուէտի կողմը (58րդ):

Պրպիլ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հարաւային Քորէան, շնորհիւ՝ Մարքայի (14րդ՝ փենալթիով) եւ Քաթիալի (55րդ եւ 62րդ) նշանակած կողմին:

Ռուսիա դժուարութեամբ պարտութեան մատնեց Աւստրալիան, երբ մրցումին աւարտէն մէկ վայրկեան առաջ Էլենա Ֆոմինա նշանակեց Ռուսիոյ յաղթանակի կողմը (2-1): Քէլի Կոյէպիովսի նշանակեց Աւստրալիոյ կողմը (37րդ), իսկ Տասյան Ալակիլ՝ Ռուսիոյ կողմը (39րդ՝ սխալմամբ իր բերդէն ներս):

Սուն Ուէնի կողմէ նշանակուած կողմը (29րդ) բաւարար եղաւ, որ անոր կազմը՝ Չինաստան 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ղանան:

Ողիմպիականի ախոյեան Նորվեկիոյ ֆուրբոլի աղջկանց պազային խումբը յաղթանակով սկսաւ մրցաշարքը, երբ Ուաշինկթընի մէջ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրանսան: Մրցաշարքին առաջին կողմը նշանակեց Անիթա Ռեփ (47րդ), ապա դարձեալ Բ. կիսախաղին, Տէլիկ Մէլկրէն՝ Նորվեկիոյ երկրորդ կողմը (66րդ):

Սուալի անգամ ըլլալով Մոնտիալին իր մասնակցութիւնը բերած Ֆրանսա, իր յաջող մրցումը պիտի կատարէ Հարաւային Քորէայի դէմ:

Շաբաթ օր տեղի ունեցած մրցումներուն մեծագոյն յաղթականը հանդիսացաւ Ճապոն, որ 6-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Արժանթինը: Միօ Օթանի ինը վայրկեանի ընթացքին հէթըրիք մը իրագործեց (72րդ, 75րդ եւ 81րդ), մինչ մնացեալ կողմը նշանակեցին՝ Հոմարէ Սաուա (13րդ եւ 38րդ) եւ Էմի Եամարո (64րդ):

Գերմանիա եւ յաղթանակ մը արձանագրեց 4-1 արդիւնքով պարտութեան մատնելով Բանաստան, հակառակ անոր որ այս վերջինը ինք բացաւ մրցումին հաշիւը, շնորհիւ՝ Քրիսթին Միսլիքի նշանակած կողմին (4րդ): Պեթինա Ուէլման (39րդ՝ փենալթիով), Սթեֆանի Կոթցիլի (47րդ), Պիրթի Փրիւք (75րդ) եւ Քրիսթին Կէրֆրէքս (90րդ) նշանակեցին Գերմանիոյ կողմը: Հիւսիսային Քորէա իր կարգին յաղթանակ մը արձանագրեց 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով Նիկերիան: Ժին Փուլոյ Հուի (13րդ եւ 88րդ) եւ Ռի Ուն Կոնկ (73րդ) նշանակեցին յաղթական կազմին կողմը:

Նշենք, թէ 2003ի աղջկանց Մոնտիալին առաջին կարմիր քարտ ստացող մարզիկը հանդիսացաւ Նաթալիա Կաթի (Արժանթին), որ Ճապոնի դէմ տեղի ունեցած մրցումին, իր կոշտ խաղարկութեան պատճառով դաշտէն վտարուեցաւ (39րդ):

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՅՈՅԵԱՆՈՒԹԻՆ

ՄԱՐՄԷՅ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ ԶԻՉԵՑԱԻ ՄՈՆԱՔՈՅԻ

Ֆրանսայի ֆուրբոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները. Լը Ման - Լիոն 0-2, Մոնպելիէ - Մոնպօ 1-2, Նանթ - Մարսէյ 1-0, Սոչո - Սթրասպուրկ 3-0, Ամաքսիօ - Ռէն 1-0, Օքսէր - Պարիս 4-1, Կենկան - Փարիզ Մէն ժերմէն 0-2, Լանս - Պորտօ 1-0, Նիս - Լիլ 2-0, Թուլուզ - Մէս 1-0

ԳԱՍԱԻՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Մոնպօ	16 (13-7)
2.- Մարսէյ	15 (11-3)
3.- Նիս	14 (9-5)
4.- Սոչո	13 (11-7)
5.- Նանթ	13 (8-4)
.....	5 (3-9)
18.- Թուլուզ	4 (5-12)
19.- Կենկան	2 (1-13)
20.- Լը Ման	

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՅՈՅԵԱՆՈՒԹԻՆ


ՏԵՓՈՐԹԻՈ ՔՈՐՈՒՆԱ ՑԱՐԴ ԿԸ ՄՆԱՅ ԼԱԻԱԳՈՅՆԸ

Սպանիոյ ֆուրբոլի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Տեփորթիօ Քորուսա շարունակեց իր յաղթանակը, երբ միակ խումբն ըլլալով արձանագրեց յաջողակաւ իր չորրորդ յաղթանակը, ապահովելով՝ առաւելագոյն 12 կէտերը:

Մայակայի դէմ տեղի ունեցած մրցումին (3-1), Ռէյալ Մատրիտի երկրորդ կողմը նշանակեց, Տէյվիտ Ալքարմի իր ապարեկին ընթացքին իր 100րդ կողմը նշանակեց (Ա. դասակարգին մէջ):



2003ի աղջկանց Մոնտիալին առաջին կողմը նշանակած՝ Անիթա Ռեփ (աջից)



Ռուսիոյ մարզիկները կը տօնեն իրենց արձանագրած յաղթանակը

ՃԱՏՐԱԿ

ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

●ՅՅՍՕՐ՝ Երեքշաբթի, Յունաստանի կրեմէ կղզիին մէջ կը սկսի ճատրակի ցուցադրական մրցում մը, որուն ընթացքին իրարու դէմ պիտի ձակաւորին Կէրի Գասպարով եւ Չուրափ Ալմայ-փա Ռաշվիլի: Անկա պիտի ըլլայ ութ հանգրուաննոց մրցաշարք մը:

●ՀԱՅԱՍՏԱՆԻ ճատրակի 63րդ ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներէն ետք, Գարրիլ Սարգսեան այժմ 5,5 կէտով կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը: Նշենք, թէ ախոյեանութեան աւարտին մնացած է չորս հանգրուան:

●ՊՈՒԼԿԱՐԻՈՅ մէջ տեղի ունեցած Երոպայի 10 տարեկանէ վար պատանիներու ճատրակի ախոյեանութեան մրցաշարքին աւարտին Հայաստանը ներկայացնող Սամուէլ Տէր Սահակեան (Վանաձորէն) առաւելագոյն 9 կէտերէն 8 կէտ ապահովելով (7 յաղթանակ եւ 2 հաւասարութիւն)՝ հանդիսացաւ Երոպայի ախոյեան:

Իսկ 14 տարեկանէ վար մրցաշարքին, Չաւէն Մնդրեասեան (Երեւանէն) այժմ ապահոված է պրոնկ մետալը: 9րդ եւ վերջին հանգրուանին յաղթանակ արձանագրելու պարագային, աւելի պիտի հանդիսանայ ախոյեան:

●ԽՐԻՍՒՄ մէջ տեղի ունեցած ճատրակի միջազգային մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող Տիգրան Նալպանտեան (Երեւանէն), առաւելագոյն չորս կէտերէն 3,5 կէտ ապահովելով, այժմ կը գտնուի ընդհանուր դասաւորման առաջնակարգ դիրքերուն վրայ:

●ՃՄՏՄԱԿԻ միջազգային ֆետերասիոնի (ՖԻՏԷ) կողմէ հրապարակուած տղոց աշխարհի նոր դասաւորման մէջ, Հայաստանի լուսագոյն վարպետ՝ Վլատիմիր Յակոբեան, այժմ կը գտնուի 22րդ դիրքին վրայ: Իսկ 40րդ դիրքին վրայ կը գտնուի Հայաստանի երկրորդ լուսագոյն վարպետը՝ Լեւոն Արոնեան:

Նշենք, թէ առաջին հարիւրին մէջ կը գտնուին հինգ հայ վարպետներ: Առաջին դիրքը տակաւին կը շարունակէ գրաւել Կէրի Գասպարով:

●ՅԱՌԱՋԻԿԱՅ 27 Սեպտեմբերին, Յունաստանի մէջ պիտի սկսի ճատրակի Երոպայի խմբային ախոյեանութեան մրցաշարքը:

Մակեդոնիոյ Արոնիէ ակումբին հետ մրցաշարքին իր մասնակցութիւնը պիտի բերէ Վլատիմիր Յակոբեան (Երեւանէն):

●ԱՆՅԵԱԼ շաբաթավերջը, Պրպիլի մէջ աւարտեցան անհատական եւ խմբային ախոյեանութեան մրցումները, որոնց ընթացքին պրպիլիսայ վարպետներ արձանագրեցին բուսական յաջող արդիւնքներ:

Սեւակ Միսիրեան առաւելագոյն եօթը կէտերէն վեց կէտ ապահովելով, դարձաւ ուսանողներու ախոյեանութեան մրցաշարքին փոխ ախոյեան, մինչ՝ Ճեֆրան Պելիկեան Պրպիլի խմբային մրցաշարքին հանդիսացաւ ախոյեան:

ԵԱԼՉԻՕ

ԵՆՈՎԷ ԶԳՐՑԱԻ ԳՐԱԽԵԼ Ա. ԴԻՐՔԸ

Իտալիոյ ֆուրբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 3րդ հանգրուանի մրցումներուն, որեւէ խումբ չյաջողեցաւ արձանագրել եղանակի իր երրորդ յաղթանակը: Չորս խումբեր՝ Ա. Էս. Ռոմա, Եուվեթուս, Ա. Սէ. Միլան եւ Ինթեր Միլան, որոնք առաջին երկու մրցումներուն յաղթանակներ արձանագրեցին, երրորդին չյաջողեցան նոյնը կատարել:

Ստորեւ՝ 4րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	ԿԵՏ
Պոլոնիա - Ռուսիոնկէ	2-0
Պրեշիա - Ռեճինա	4-4
Ինթեր Միլան - Սամտորիա	0-0
Եուվեթուս - Ա. Էս. Ռոմա	2-2
Լազիօ Ռոմա - Փարմա	2-3
Լէչէ - Քիեւօ	1-2
Փերուճիա - Ա. Սէ. Միլան	1-1
Սիենա - Էմպոլի	4-0
Անրոնա - Մոտենա	1-1

ԳԱՍԱԻՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Ա. Էս. Ռոմա	7 (9-3)
2.- Եուվեթուս	7 (9-4)
3.- Փարմա	7 (8-4)
4.- Ինթեր Միլան	7 (3-0)
5.- Ա. Սէ. Միլան	7 (5-2)
.....	
16.- Էմպոլի	1 (2-10)
17.- Անրոնա	1 (2-5)
18.- Մոտենա	1 (1-3)

ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ՆԵՐԿԱՅ ...

Շարունակուած Ա. Էջէն
տարած էր պաղեստինեան շարժումներու ներկայացուցիչներու հետ՝ ապահովելու համար անոնց մասնակցութիւնն ու Վորակցութիւնը կազմելիք կառավարութեան: Կապայի մէջ Քորէյ յայտարարեց, որ տակաւին երկու շաբաթ ունի կառավարութիւնը կազմելու համար: Ըստ Ֆաթիի աղբիւրներէն, Ապու Միլայի կառավարութիւնը կրնայ կազմել իր յաջողակաւ քանի մը օրերուն ընթացքին: Միւս կողմէ, Է.Ֆ. Փէ. Էլ. Փէ.ի մէկ բանբերը կոչուողեց պաղեստինեան բոլոր հիմնարկներուն եւ հաստատութիւններուն բարեկարգումին: Բանբերը աւելցուց, որ Է.Ֆ. Փէ. Էլ. Փէ. տակաւին չէ յայտարարած, թէ պիտի միանայ Ապու Միլայի կառավարութեան: Ան քսաւ նաեւ, որ կառավարութիւնը չի կրնար պաղեստինցի ամբողջ ժողովուրդին ներկայացուցիչ ըլլալ:

●ԻՍՐԱԷԷԼԵՍՆ ուժեր Համասի մէկ պատասխանատուն սպաննեցին Հեյտանի մէջ: Քանակին բանբերը յայտնեց, որ պոլիտոլոգները քանդեցին բնակարանը, ուր ապաստանած էր Պասէլ Քաուամմէ, վոր սպաննեցին:

